3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Տիրապետելու կանխատեսման մեթոդին, թե այս կամ այն գործոնը, ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա7.** մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու ռական բանավեճեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.

1. Պասիվ դասախոսություն
2. Ակտիվ դասախոսություն
- ✓ *հարց ու պատասխան*
- ✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն
- ✓ *«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում*
- ✓ *հարց ու պատասխան*
- ✓ *բանավեճ*
- ✓ *զրույց*

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:
2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2**. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3**. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4**. Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5**. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6**. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7**. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա

հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաիների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.


| **1.0104/ B 04** | **2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4.2 ժամ/շաբ.** | **5.0/30/0** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

**<u>Դասընթացի խնդիրները</u>**

1. Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
2. Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
3. Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
4. Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
5. Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ3**.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ5**.արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. գործնական աշխատանք

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարք.** Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը. գնահատվում է «Բավարար»,եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը;
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեսթերից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.**

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

**Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.**

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapesերի հետ: Աղյուսակների տեղադրում::

**Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ**

Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյակների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:

**Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:**

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ոճերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ոճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Ա.Հովակիմյան, Ս.Սարգսյան, Խաչոյան Լ., Ն.Իսպիրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. А. Тихомиров, Прокди А.К., Колосков П.В., Клендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Զանփոլադյան, Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Երևան, 2000թ.:


| | | |
|---|---|---|
| **1.0001/ B05/B09** | **2.Ֆիզդաստիարակություն** | **3.0 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.0/30/0** | |
| **6.1-ին, 2-րդ կիսամյակներ** | **7.Ստուգարք** | |

***8.Դասընթացի նպատակն է*** հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,

- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- ➢ հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ➢ ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ➢ ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ➢ ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ➢ ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

***9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝***

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձներում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)***

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.**

**Գ5**.արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
    - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
    - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
    - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
    - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,

- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

*12.Գնահատման մեթոդները և չափանիշները*

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

***13.Դասընթացի թեմատիկ բովանդակությունը.*** /բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից./

<u>1-ին կիսամյակ</u>

***Թեմա 1.*** Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 2.*** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: ***Թեմա 3.*** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: ***Թեմա 4.*** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

<u>2-րդ կիսամյակ</u>

***Թեմա 1.*** Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: ***Թեմա 2.*** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: ***Թեմա 5.*** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100մ, 200մ, 300մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300մ, տղաներ՝ 500մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500մ (աղջիկներ), 1000մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: ***Թեմա 6.*** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: ***Թեմա 8.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Սամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբասյան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ. Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր.,

2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ. Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաշյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

| | | |
|---|---|---|
| **1.0001/B10/B14** | **2.Ֆիզդաստիարակություն** | **3.0 ECTS կրեդիտ** |
| **3. 2 ժամ/շաբ.** | **5.0/30/0** | |
| **6. 3-րդ, 4-րդ կիսամյակներ** | **7.Ստուգարք** | |

***8.Դասընթացի նպատակն է*** հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

**<u>Դասընթացի խնդիրներն են.</u>**

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

***9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝***

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկելու սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկելու նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,

5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարելու ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերել նորմատիվներին համապատասխան արդյունքներ,

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնել թեմատիկ հանձնարականի փոխադարձ վերահսկողություն,
2. աջակցել ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնել իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ,
3. վերլուծել դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները,
4. կազմակերպել մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս,
5. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**

**Գ5**.արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
   - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
   - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
   - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

***12.Գնահատման մեթոդները և չափանիշները***

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**<u>3-րդ կիսամյակ</u>**

***Թեմա 1.*** Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: ***Թեմա 2.*** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 3.*** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: ***Թեմա 4.*** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: ***Թեմա 5.*** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում:

Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: ***Թեմա 6.*** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: ***Թեմա 7.*** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: ***Թեմա 8.*** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: ***Թեմա 9.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: ***Թեմա 10.*** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

**<u>4-րդ կիսամյակ</u>**

***Թեմա 1.*** Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: ***Թեմա 2.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: ***Թեմա 5.*** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: ***Թեմա 6.*** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: ***Թեմա 7.*** Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: ***Թեմա 8.*** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: ***Թեմա 9.*** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: ***Թեմա 10.*** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): ***Թեմա 11.*** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: ***Թեմա 12.*** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: ***Թեմա 13.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիակական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիակական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ. Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ. Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:


| | | |
|---|---|---|
| **1. 0001/B 08** | **2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն** | **3.4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6. 2-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է** սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները:

2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին:
3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները:
4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը:
5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն:
2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում:
3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում:
4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:

***Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում:
2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:
3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.**

**Ա7**. մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:
**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ,
4. լաբորատոր աշխատանքներ,
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

**12.Գնահատման մեթոդները և չափանիշները**

Դասընթացն ավարտվում է **ստուգարքով:** Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման միջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**<u>Բաժին 1</u>. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ:** ***Թեմա 1.***Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2.*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **<u>Բաժին 2.</u> Քաղաքացիական պաշտպանություն:** ***Թեմա 3.*** Բնակչության գործողությունները աhաբեկչու-թյունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4.*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5.*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6.*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա 7.*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **<u>Բաժին 3.</u> ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն:** ***Թեմա 8.*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 9.*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 10.*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 11.*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 12.*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Ց., Վարդանյան Զ.Հ., «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:
2. Հեղինակների կոլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:
3. Կ.Ա. Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:
4. Մ.Խ.Ադամյան, «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ: 5. Ս.Ա.Մանուկյան, Գ.Հ.Ճաղարյան «Արտակարգ իրավիճակների և

քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017

| 1. 0104/B11 | 2.Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք | 3. 2 ECTS կրեդիտ |
|---|---|---|
| 4. 2 ժամ/շաբ. | 5. 15/15/0 | |
| 6. 3-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |

**8. Դասընթացի նպատակն է՝** ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:
2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ <u>վերջնարդյունք(ներ)ը</u>. :**

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. ինքնուրույն խատանքներ

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգարքն անց է կացվում բանավոր:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 2.** Նմուշային եղանակ: **Թեմա 3.** Գնահատման տեսություն: **Թեմա 4.** Միջակայքային գնահատականներ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Աhարոնյան Ն., Խաչատրյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.


| 1. 0304/ B12 | 2. Իրավունքի հիմունքներ | 3. 2 ECTS կրեդիտ |
|---|---|---|
| 4. 2 ժամ/շաբ. | 5. 30/0/0 | |
| 6. 3-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |

**8.** ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**

1. Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
2. Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ:
2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3**. սահմանելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Ա4.** մատնանշելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Դասախոսություն
2. Ռեֆերատ
3. զեկուցում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարք.** Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4**. Քրեական իրավունք: **Թեմա 5**. Աշխատանքային իրավունք: **Թեմա 6**. Ընտանեկան իրավունք: **Թեմա 7**. Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8**. Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10**. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11**. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12**. Միջազգային իրավունք:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանդյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:


| | | |
|---|---|---|
| **1. 0304 /B13** | **2. Փիլիսոփայության հիմունքներ** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 30/0/30** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |

**8.** ***Դասընթացի նպատակն է՝*** ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

**Դասընթացի խնդիրները.**

1. Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
2. Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
3. Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական

| |
|---|
| մեթոդաբանության դերն ու նշանակությունը:<br>*բ. գործնական մասնագիտական կարողություններ*<br>1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:<br>2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:<br>3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:<br>*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*<br>1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը: |
| **10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ4.**վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով,<br>**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր: |
| **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. սեմինար<br>3. քննարկում<br>4. զեկուցում<br>5. ռեֆերատ |
| **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***Ստուգարք.*** Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում: |
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7.** Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:<br>2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:<br>3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:<br>4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1980:<br>5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:<br>6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975: |

Կամընտրական առարկաներ

| **1.0305/B15** | **2. Անգլերեն -1** | **3. 4 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 0/60/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Ստուգարք** | |
| **8. Դասընթացի նպատակն է՝** ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար:<br>2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում: | | |
| **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*<br>1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը:<br>2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները:<br>3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները:<br>4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:<br>*բ. գործնական մասնագիտական կարողություններ*<br>1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:<br>2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:<br>3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: | | |

| | | |
|---|---|---|
| *գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*<br>1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:<br>2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:<br>3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,<br>**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր: | | |
| **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. հաղորդակցական մեթոդ<br>2. մտագրոհ<br>3. ուսանողական պորտֆոլիո<br>4. խմբային աշխատանք<br>5. գրավոր և բանավոր թարգմանություն<br>6. աշխատանք տեղեկագրով<br>7. ռեֆերատ<br>8. ինքնուրույն աշխատանք | | |
| **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.<br>• գրավոր և բանավոր թարգմանություններ,<br>• ռեֆերատ,<br>• պրեզենտացիա,<br>• խմբային աշխատանք,<br>• ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ): | | |
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Բաժին 1.** Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: **Բաժին 2.** Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: **Բաժին 3.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն: | | |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.<br>2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.<br>3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.<br>4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.<br>5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc. | | |

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B16** | **2. Անգլերեն 2** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 0/60/0** | |
| **6. 2-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |
| **8. Դասընթացի նպատակն է՝** հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը:<br>2. Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից: | | |
| **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները: | | |

2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*<u>Ստուգարքը</u>* համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Բաժին 1.**Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: **Բաժին 2.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.


| | | |
|---|---|---|
| **1.0305/B15** | **2.Ֆրանսերեն– 1** | **3.4 ECTS կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.0/60/0** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.Ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս

փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

**Դասընթացի խնդիրները.**

1. Խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝**

1. Անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2.** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3.** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4.** Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: **Թեմա 5.** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: **Թեմա 6.** Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: **Թեմա 7.** Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
4. M. Djoulhakian, R. Meliksetian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

| | | |
|---|---|---|
| 1.0305/B16 | 2.Ֆրանսերեն – 2 | 3.4 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.0/60/0 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |

**8.Դասընթացի նպատակն է՝** խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:

**Դասընթացի խնդիրները.**

1. Խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝**

1. Անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2.** Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 3.** Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 4.** Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ **Թեմա 5.** Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: **Թեմա 6.** Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում:

| |
|---|
| **Թեմա 7.** Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008<br>2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).<br>3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),<br>M. Djoulhakian, R. Meliksпtian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011. |

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

## Կամընտրական դասընթացներ

| 1.0303/B17 | 2.Բարոյագիտության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
|---|---|---|
| 4.2 ժամ/շաբ. | 5. 30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7. ստուգարք | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

**Դասընթացի խնդիրները**

1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:
6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. զեկուցումներ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

<u>**Բաժին 1.**</u> **<u>Բարոյագիտության հիմնական կատեգորիաները</u>. Թեմա 1.** Հասկացություն բարոյագիտության

|  |
| --- |
| կատեգորիաների մասին: **Թեմա 2.** Բարին և չարը: **Թեմա 3.** Պարտք և պատասխանատվություն: **Թեմա 4.** Պատիվ և արժանապատվություն: **Թեմա 5.** Խիղճ: Բարոյական իդեալ: **Թեմա 6.** Կյանքի իմաստն ու նպատակը: **Թեմա 7.** Երջանկություն. Սեր: **Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8.** Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: **Թեմա 9.** Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **Բաժին 3. Բարոյականություն և ազատություն: Թեմա 10.** Անձը և համակեցությունը: **Թեմա 11.** Բարոյականության հասարակական խնդիրները: **Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12.** Անձի բարոյական գիտակցությունը: **Թեմա 13.** Անձի բարոյական գործունեությունը: **Թեմա 14.** Անձի բարոյական հարաբերությունները: **Թեմա 15.** Անձի բարոյական մշակույթը: **Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16.** Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: **Թեմա 17.** Ազգային-բարոյական նկարագիր: **Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18.** Կիրառական բարոյագիտություն: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. А. Разин, Этика, Москва, 2003.<br>2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.<br>3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.<br>4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.<br>5. Словарь по этике. |

| 1. 0105 /B17 | 2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր | 3.2 ECTS կրեդիտ |
| --- | --- | --- |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3–րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |

|  |
| --- |
| **8.Դասընթացի նպատակն է՝** հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:<br>**Դասընթացի խնդիրներն են՝**<br>1. Ձևավորել բնագիտական աշխարհայացք:<br>2. Ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը:<br>3. Բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները:<br>4. Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին: |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:<br>2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին:<br>3. Մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիա-ները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:<br>2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:<br>3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը:<br>2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան: |

| |
|---|
| 3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը: |
| **10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա5.**ներկայացնելու հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,<br>**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),<br>2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),<br>3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),<br>4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),<br>5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),<br>6. քննադական մտածողության մեթոդները,<br>7. խմբային աշխատանքի մեթոդները,<br>8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,<br>9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն): |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***Ստուգարք.*** Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**<br>**Թեմա 1.** Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանի-տար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցություն-ների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբ-երականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացմ-ան և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ,Երևան, 2007:<br>2. Канке В.А., Концепции современного естествознания,Логос. Москва, 2002.<br>3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова). |

| | | |
|---|---|---|
| **1.0201/ B17** | **2.Գործարարության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
| **4.2ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |
| **8.Դասընթացի նպատակն է** հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:<br>2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:<br>3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:<br>2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:<br>3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:<br>4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը | | |

2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:
3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:
4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

գ. *ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)*

1. Աշխատելու թիմում:
2. Մոտիվացնելու:
3. Առաջնորդելու:
4. Աշխատելու տեղեկատվության հետ:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ5.**արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական խաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց,ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց կացվում գրավոր:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1**. Գործարարության էությունը և ֆունկցիաները: **Թեմա 2.** Գործարարության միջավայրը և տեսակները: **Թեմա 3**. Գործարարության սուբյեկտները: **Թեմա 4**. Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: **Թեմա 5.** Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը,որպես գործարարության նախադրյալ: **Թեմա 6.** Մարքեթինգի պլան: **Թեմա 7**. Գործունեության կադրային ապահովումը: **Թեմա 8**. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: **Թեմա 9.** Արտադրական պլան **Թեմա 10.** Ինքնարժեքի կալկուլյացիա: **Թեմա 11.** Ձեռնարկատիրական ռիսկ: **Թեմա 12**. Ֆինանսական պլանավորում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова, «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/
2. В.Ю.Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011.
3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//
4. С.И.Башаримова, М.В. Дасько, «Основы предпринимательства» учебное пособие.
5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//.


| **1. 0304/B17** | **2. Կրոնագիտության հիմունքներ** | **3. 2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |

**8.** ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:
2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական

առանձնահատկությունները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:
2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**

**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ4.**գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Ստուգարք*. Ստուգարքը անց է կացվում բանավոր, նախապես տրամադրված հարցաշարի շրջանակներում:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից**.

**Թեմա 1.** Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5.**Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


*1.* Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
*2.* Աստվածաշունչ:
*3.* Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимирон Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.


| 1.0202 /B17 | 2. Մշակութաբանության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
|---|---|---|
| 4. 2 ժամ/շաբ. | 5. 30/0/0 | |
| 6. 3-րդ կիսամյակ | 7. ստուգարք | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և

զարգացման հիմնական օրինաչափությունները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ4.**գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.**Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: **Թեմա 11.**Հայկական մշակույթ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս.Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С.А., Рыжакова С. И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В.М., Культурология, М., 1998.


| 1.0303/ B17 | 2.Սոցիոլոգիայի հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
|---|---|---|
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.** պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ4.**գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Ստուգարքն* անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1**. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2**. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4**. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5**. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Бабосов Е.М. Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8
2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011.
3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А.М. От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.
5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)
6. Кравченко А.И. Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.


| | | |
|---|---|---|
| **1.0201/B17** | **2.Տնտեսագիտության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է**՝ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

**Դասընթացի խնդիրները**

1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:
2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:
3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից:
4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

| | | |
|---|---|---|
| *ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*<br>1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:<br>2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:<br>*բ. գործնական մասնագիտական կարողություններ*<br>1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:<br>2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:<br>*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*<br>1. Աշխատելու թիմում:<br>2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվել հանրության հետ: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և **հասարակական տեղեկատվությունը,**<br>**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,<br>**Գ4.**գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները, | | |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. Դասախոսություններ<br>2. Սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր<br>3. Խմբային աշխատանքներ<br>4. Ռեֆերատներ | | |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: | | |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**<br>**Թեմա 1**. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2**. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3.** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4**. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5**. Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7**. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8**. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10**. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11**. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12**. Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14**. Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15**. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր: | | |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Գորթնի Ջ. , Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:<br>2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:<br>3. Макконнелл К.Р., Брью С.Л. Економика. 17-ое изд., Москва, 2009.<br>4. Економическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998 | | |

| **1. 0304/B17** | **2.Տրամաբանության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4.2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝** ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները:<br>2. Ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ:<br>3. Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին:<br>4. Ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել | | |

ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:
3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:
2. Զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:
3. Զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ3**. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1**. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2**. Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4**. Տրամաբանության օրենքները: **Թեմա 5**. Մտահանգում: **Թեմա 6**. Ապացուցում և հերքում: **Թեմա 7**. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

| | | |
|---|---|---|
| **1.0304/B17** | **2.Քաղաքագիտության հիմունքներ** | **3.2 կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
2. Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
3. Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ4.**գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա** 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարախոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: ***Թեմա 15.*** Քաղաքական մշակույթ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.


## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ

### Պարտադիր դասընթացներ

| | | |
|---|---|---|
| **1.0105/B18** | **2.Մաթեմատիկա -1** | **3.5 կրեդիտ** |
| **4.5 ժամ/շաբ.** | **5.30/45/0** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,

3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու բնական թիվ, ներկայացնելու և բնութագրելու բնական թվի տասնորդական գրառումը, բացատրելու բնական թվերի նկատմամբ կատարվող գործողությունները և նկարագրելու նրանց կատարման ալգորիթմները:
2. Սահմանելու ռացիոնալ թիվ (սովորական կոտորակ, անկանոն կոտորակ, կանոնավոր կոտարակ), նկարագրելու կոտորակների նկատմամբ կատարվող գործողությունները, սահմանելու և բնութագրելու խառը թիվ, տասնորդական կոտորակ, անվերջ պարբերական տասնորդական կոտորակ, իռացիոնալ թիվ, իրական թիվ, բացատրելու թվաբանական արմատ և ռացիոնալ ցուցիչով աստիճան գործողությունները, սահմանելու կոտորակային հանրահաշվական արտահայտություն:
3. Սահմանելու բազմանդամ (մեկ փոփոխականի), ներկայացնելու բազմանդամի ստանդարտ տեսքը, բնութագրելու բազմանդամի նույնական ձևափոխության տրամաբանությունը, բացատրելու բազմադամը արտադրիչների վերլուծելու անհրաժեշտությունը:
4. Սահմանելու ֆունկցիա, ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթ հասկացությունները, ներկայացնելու ֆունկցիայի գրաֆիկի տրման ձևերը, բացատրելու ֆունկցիայի մի շարք հատկություններ (զույգ, կենտ, աճող, նվազող, մոնոտոն ֆունկցիա) , սահմանելու գծային ֆունկցիա, քառակուսային ֆունկցիա, բացատրելու ուղիղ և հակադարձ համեմատականությունների գաղափարը:
5. Սահմանելու մեկ փոփոխականով հավասարում, անհավասարում, սահմանելու հավասարման արմատ գաղափարը, նկարագրելու հավասարման և անհավասարման լուծման մեթոդները և նրանց լուծումների բազմությունը, սահմանելու համակարգ և համախումբ հասկացությունները և բացատրելու նրանց լուծման մեթոդները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Կատարելու գործողություններ բնական, ամբողջ և ռացիոնալ թվերի նկամամբ՝ օգտվելով բաժանելիության հայտանիշներից, թվի կանոնական վերլուծությունից, ամենամեծ ընդհանուր բազմապատիկից:
2. Կատարելու գործողություններ հանրահաշվական և ռացիոնալ արտահայտությունների նկատմամբ,
3. Կատարելու գործողություններ բազմությունների նկատմամբ:
4. Կառուցելու գծային, քառակուսային և աստիճանային ֆունկցիաների գրաֆիկները, կատարելու դրանց ձևափոխությունները:
5. Լուծելու տոկոսին և թվի մասին վերաբերող տեքստային խնդիրներ:
6. Լուծելու գծային, քառակուսային հավասարումներ և անհավասարումներ, ինչպես նաև դրանցից կազմված համակարգեր և համախմբեր:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Կիառելու հաշվողական հնարները տարրական դպրոցում:
2. Լուծելու մաթեմատիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրներ և վարժություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Բնական թվեր: Ռացիոնալ թվեր: Իրական թվեր: **Թեմա 2.** Հանրահաշվական արտահայտություններ: Կոտորակային–ռացիոնալ արտահայտություններ: Իռացիոնալ արտահայտություններ: **Թեմա 3.** Հավասարումներ և անհավասարումներ: Հավասարություններ և անհավասարություններ: **Թեմա 4.** Ֆունկցիա:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):


| | | |
|---|---|---|
| **1.0303/B19** | **2.Հոգեբանության հիմունքներ-1** | **3.4 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է.** ծանոթանալ հոգեբանության հիմնական հասկացություններին, մեթոդներին, խնդիրներին և բնագավառներին, գիտելիքների ձեռք բերել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների ,անձի զարգացման և ձևավորման մեխանիզմների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերել հոգեբանական և մանկավարժական գործունեությունն արդյունավետ իրականացնելու գործնական հմտություններ և կարողություններ:

**Դասընթացի խնդիրները**.

1. տալ ընդհանուր պատերացում հոգեբանության առարկայի, մեթոդների և ժամանակակից բնագավառների մասին,
2. ուսումնասիրել հոգեկան գործընթացների հիմնական տեսակները, դրանց օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. ծանոթանալ ճանաչողական գործընթացների ուսումնասիրության հիմնական մեթոդներին, դրանց կիրառությանն ու գործառույթներին,
4. իրականացնել ինքնուրույն տեսական և գործնական ուսումնասիրություններ՝ զարգացնելով հոգեբանության վերաբերյալ տեսական և կիրառական գիտելիքներ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Բնութագրելու հոգեբանության գիտությունը, նրա զարգացման և ուսումնասիրության բնագավառները,
2. Ներկայացնելու հոգեկան գործընթացները, վիճակներն ու հատկությունները, դրանց օրինաչափությունները, անձի զարգացման և ձևավորման առանձնահատկությունները:
3. Չնակերպելու մարդու հոգեկանի սահմանումը, բնութագրելու նրա հիմքերը և կառուցվածքը, թվարկելու նրա գործառույթները:
4. Հոգեկանի բովանդակության մեջ առանձնացնելու և քննարկելու հոգեկանի ճանաչողական գործընթացները, ներկայացնելու դրանց կառուցվածքը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Վերլուծելու և համադրելու հոգեկան գործընթացների, վիճակների ու հատկությունների վերաբերյալ ստացած գիտելիքները, դրանք կիրառելու գործնականում:
2. ինքնուրույն կատարելու ուսումնասիրություններ հոգեբանության գիտության, նրա ճանաչողական գործընթացների վերաբերյալ՝ կիրառելով ուսումնասիրած հոգեբանության մեթոդները:
3. Վերլուծելու մասնագիտական գրականությունից հավաքագրած տեղեկատվությունը:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)***

1. Կատարելու միջառարկայական վերլուծություններ, համադրություններ և ընդհանրացումներ:

| |
|---|
| 2. Կառուցելու և տրամաբանորեն հիմնավորելու սեփական մտքերը: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.<br>**Ա1**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա2**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Ա3**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,<br>**Բ2**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,<br>**Բ3**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),<br>2. թիմային աշխատանքներ,<br>3. քննարկումներ,<br>4. հետազոտական սեմինարներ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2.** Հոգեբանության կա-պը այլ գիտությունների հետ, հիմնական բնագավառները: **Թեմա 3.** Հոգեկանը և ուղեղը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 6.** Անձի զարգացում և սոցիալականացում: Ես-կոնցեպցիա: **Թեմա 7.** Իմացական գործընթացներ: Զգայություններ: **Թեմա 8.** Ըմբռնում, առանձնահատկությունները, տեսակները: **Թեմա 9.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները: **Թեմա 10**. Հիշողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 11.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Խոսք և հաղորդակցում: **Թեմա 13.** Երևակայություն և պրոբլեմային իրադրություն, տեսակները: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ.<br>2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997.<br>3. Հայրապետյան Դ., Կոգնիտիվ գործընթացների պրակտիկում ԵՊՀ հրատ. Երևան.<br>4. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.<br>5. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.<br>6. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).<br>7. Столяренко Л.Д., Психология.учебник для вузов.-СПб.: Питер,2010. 592.<br>8. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005. |

| **1.0302/ B20** | **2.Հայոց լեզու և գրականություն -1** | **3.4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.4 ժամ** | **5.30/30/0** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի | | |

գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:

**Դասընթացի խնդիրները.**

Ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:

***9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.***

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը:
2. Զևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն):
3. Սահմանելու, բացատրելու ձևաբանական, լեզվական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:
2. Գործառելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,
2. Աշխատելու թիմում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ1**. իրականացնելու մասնագիտական գործունեություն,

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվություն,

**Գ3**.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Քննարկում /բանավեճ:
2. Համագործակցային աշխատանք:
3. Մտագրոհ:
4. Վերլուծական մեթոդ:
5. Խոսքային կամ բանավոր մեթոդ:
6. Գրավոր մեթոդ:
7. Բացատրական մեթոդ:

***12.Համառոտ բովանդակություն.***

**Թեմա 1.** «Հայոց լեզու և գրականություն-1» առարկայի նպատակը և խնդիրները: Լեզվի կապը այլ առարկաների հետ: **Թեմա 2.** Ուղղագրական և ուղղախոսական նորմեր: **Թեմա 3.** Հնչերանգ և արտասանվածք: Գրագրության ձևեր: **Թեմա 4.** Բառագործածություն, ոճական սխալներ և դրանց կանխումը: **Թեմա 5.** Ձևաբանական նորմեր: **Թեմա 5.** Շարահյուսական նորմեր. նախադասության կազմիչներ և շարադասություն: **Թեմա 6.** Խոսքի արժանիքները:

***13.* Գնահատման մեթոդները և չափանիշները.**

**1-ին ընթացիկ ստուգում,** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 3, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 2 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքներ. ստեղծագործական, թեմատիկ շարադրություններ, կարծիքներ, բնութագրում, փոխադրություններ, կարճառոտ գեղարվեստական ստեղծա գործության վերլուծություն, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

**2-րդ ընթացիկ ստուգում,** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 3, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 2 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքներ. ստեղծագործական, թեմատիկ շարադրություններ, կարծիքներ, բնութագրում, փոխադրություններ, կարճառոտ գեղարվեստական ստեղծագործության վերլուծություն, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին

| |
|---|
| համապատասխան: Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները: |
| *14.Հիմնական գրականության ցանկը.* <br>1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր.,2014: <br>2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր, 2015: <br>3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002: <br>4. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: <br>5. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997: <br>6. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր.,2003: <br>7. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990,1991: <br>8. Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու,Երևան, 2017: |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B21** | **2.Մանկավարժության հիմունքներ-1** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ /շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.1-ին կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ապագա մանկավարժների տեսական մտածողության զարգացման հիման վրա մանկավարժական-մասնագիտական գործիմացության ձևավորումն է և մանկավարժական իրողություն-ների գիտական իմաստավորումը: <br>**Դասընթացի խնդիրները.** <br>1. մանկավարժական գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորումը, որն արտացոլում է ժամանակակից մանկավարժական գիտության զարգացման մակարդակը, <br>2. մանկավարժական երևույթները նկարագրելու, բացատրելու, նորը կանխատեսելու կարողությունների ձևավորումը, <br>3. մասնագիտական մանկավարժական խնդիրների լուծման համար գիտահետազոտական մեթոդների կիրառման կարողությունների ձևավորումը, <br>4. ապագա մանկավարժներին մասնագիտական գործունեությանը պատրաստության գործընթացում հետազոտական կարողությունների, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝** <br>*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն* <br>1. Բնութագրելու մանկավարժության ուսումնասիրության առարկան, բացահայտելու մանկավարժության ծագումն ու զարգացման փուլերը, սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները: <br>2. Նկարագրելու մանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում, բացահայտելու մանկավարժության կապը այլ գիտությունների հետ, <br>3. Մեկնաբանելու մանկավարժական գիտության մեթոդաբանությունը, մանկավարժական հետազոտությունների իրականացման գիտական մեթոդները, մանկավարժական գործընթացի բաղադրամասերը, փուլերը և օրինաչափությունները: <br>4. Ներկայացնելու ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, կրթության նպատակը և բո-վանդակությունը կրթական բարեփոխումների արդի փուլում: <br>5. Թվարկելու և բացատրելու անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները: <br>6. Սահմանելու ուսուցման և դաստիարակության կազմակերպման սկզբունքները, թվարկելու դրանց իրականացման մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, ներկայացնելու ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը: <br>*բ. գործնական մասնագիտական կարողություններ* <br>1. Կիրառելու տեսական գիտելիքները մանկավարժական տարբեր իրավիճակներում: <br>2. Կատարելու գիտաուսումնական հետազոտություն, վերլուծելու, համակարգելու, ամփոփելու և իմաստավորելու հետազոտության արդյունքները: <br>3. Օգտվելու ուսումնական տեղեկատվության տարբեր աղբյուրներից, հավաքագրելու, համակարգելու և նպատակային կիրառելու մասնագիտական տեղեկատվությունը: <br>4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում զուգակցելու ուսուցման և դաստիարակության ավանդական և նոր տեխնոլոգիաները, կիրառելու ուսումնադաստիարակչական արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից ձևերը: | | |

5. Ըստ ուսուցման և դաստիարակության նպատակների ձևակերպելու ուսումնադաստիարակչական խնդիրներ և նախագծելու դրանց լուծման ուղիներ:
6. Բացատրելու մանկավարժական հասկացությունները, սկզբունքները, օրինաչափությունները՝ ուսումնական բանավեճերի ընթացքում, արտահայտելու սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, դրսևորել համագործակցային և հաղորդակցական կարողություններ:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Մասնագիտական միջավայրում դրսևորելու իր մանկավարժական մեթոդաբանական գիտելիքները:
2. Կրթական համակարգում պահպանելու աշակերտ և ուսուցիչ ուսումնական փոխհամագործակցությունը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
3. Մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում լուծելու ուսումնական խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը` հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ1.**իրականացնել մասնագիտական գործունեություն,

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպել իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, գնահատել և զուգադրել լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկավարժությունը որպես գիտություն: Մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները և գործառույթները: **Թեմա 2**. Մանկավարժության մեթոդաբանությունը և գիտահետազոտական մեթոդները: **Թեմա 3.** Անձի սոցիալականացման գործընթացը: **Թեմա 4.** Մանկավարժական գործընթացը որպես համակարգ և ամբողջական երևույթ: **Թեմա 5.** Կրթական համակարգը ՀՀ-ում: **Թեմա 6.** Դիդակտիկան որպես մանկավարժական տեսություն: **Թեմա 7.** Ուսուցման գործընթացը որպես ամբողջական համակարգ: **Թեմա 8.** Ուսուցման օրինաչափությունները, սկզբունքները և դրանց դասակարգումը: **Թեմա 9.** Ուսուցման մեթոդներն ու միջոցները: **Թեմա 10.** Ուսուցմանժամանակակից տեխնոլոգիաներ: **Թեմա 11.** Ուսուցման կազմակերպման ձևերը: **Թեմա 12.** Ուսուցման գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Մանկավարժ. հրատ., Երևան, 2005
2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,Զանգակ-97, Երևան, 2005
3. Пидкасистый П.И., Педагогика, Юраит, Москва, 2011
4. Подласый И.П., Педагогика, 2002

| |
|---|
| 5. Учебник для бакалавров, Юраит, Москва, 2012<br>6. Сластенин В.А., Педагогика: Учебник, Академия, Москва, 2011<br>7. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник, Гардарики, Москва, 2007 |

| 1.0105/B22 | 2.Մաթեմատիկա-2 | 3.5 կրեդիտ |
|---|---|---|
| 4. 5 ժամ/շաբ. | 5.30/45/0 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Առանց եզրափակիչ գնահատման | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Թվարկելու մաթեմատիկայի կարևորագույն մեծությունները:
2. Բնութագրելու հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաները, մատնանշելու դրանց հետ կապված հարցերը:
3. Ներկայացնելու բնական թվի և զրոյի գաղափարների ներմուծման և ձևավորման հարցերը, բացատրել թվարկության տասնորդական դիրքային համակարգի առանձնահատկությունները:
4. Շարադրելու թվաբանական գործողությունների ներմուծման, թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապի ուսուցման հիմնախնդիրները:
5. Ներկայացնելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու ուսուցման մեթոդները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Կիրառելու թվաբանական գործողությունների ստուգման մեթոդները տարբեր առաջադրանքներում:
2. Օգտվելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու մեթոդներից:
3. Կազմակերպելու և անցկացնելու հանրահաշվական և երկրաչափական բովանդակությամբ արտադասարանական, խմբակային պարապունքներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Առաջադրելու և լուծելու տարբեր հանրահաշվական և երկրաչափական խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

| |
|---|
| **Թեմա 1.** Բազմություններ և գործողություններ դրանց նկատմամբ: **Թեմա 2.** Առնչություններ, առնչությունների տեսակներ: **Թեմա 3.** Ֆունկցիոնալ առնչություն: **Թեմա 4.** Ասույթների հաշիվ: **Թեմա 5.** Պայմանական դատողություններ: **Թեմա 6.** Տարրական դպրոցում թվարկության ուսուցման տեսական հիմունքները: **Թեմա 7.** Հասկացությունները և փաստարկումները տարրական դպրոցի «մաթեմատիկա դասընթացում»: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:<br>2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:<br>3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:<br>4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.<br>5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.<br>6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ): |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B23** | **2.Հոգեբանության հիմունքներ-2** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.2-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է.** ծանոթանալ հոգեբանության հիմնական հասկացություններին, մեթոդներին, խնդիրներին և բնագավառներին, գիտելիքների ձեռք բերել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների ,անձի զարգացման և ձևավորման մեխանիզմների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերել հոգեբանական և մանկավարժական գործունեություն արդյունավետ իրականացնելու գործնական հմտություններ և կարողություններ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. տալ ընդհանուր պատերացում հոգեբանության առարկայի, մեթոդների և ժամանակակից բնագավառների մասին,<br>2. ուսումնասիրել հոգեկան գործընթացների հիմնական տեսակները, դրանց օրինաչափություններն ու առանձնահատկությունները,<br>3. ծանոթանալ ճանաչողական գործընթացների ուսումնասիրության հիմնական մեթոդներին, դրանց կիրառությանն ու գործառույթներին,<br>4. իրականացնել ինքնուրույն տեսական և գործնական ուսումնասիրություններ՝ զարգացնելով հոգեբանության վերաբերյալ տեսական և կիրառական գիտելիքներ: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Բնութագրելու հոգեբանության գիտությունը, նրա զարգացման և ուսումնասիրության բնագավառները,<br>2. Ներկայացնելու հոգեկան գործընթացները, վիճակներն ու հատկությունները, դրանց օրինաչափությունները, անձի զարգացման և ձևավորման առանձնահատկությունները:<br>3. Ձևակերպելու մարդու հոգեկանի սահմանումը, բնութագրելու նրա հիմքերը և կառուցվածքը, թվարկելու նրա գործառույթները:<br>4. Հոգեկանի բովանդակության մեջ առանձնացնելու և քննարկելու հոգեկանի ճանաչողական գործընթացները, ներկայացնելու դրանց կառուցվածքը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Վերլուծելու և համադրելու հոգեկան գործընթացների, վիճակների ու հատկությունների վերաբերյալ ստացած գիտելիքները, դրանք կիրառելու գործնականում:<br>2. ինքնուրույն կատարելու ուսումնասիրություններ հոգեբանության գիտության, նրա ճանաչողական գործընթացների վերաբերյալ՝ կիրառելով ուսումնասիրած հոգեբանության մեթոդները:<br>3. Վերլուծելու մասնագիտական գրականությունից հավաքագրած տեղեկատվությունը:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Կատարելու միջառարկայական վերլուծություններ, համադրություններ և ընդհանրացումներ:<br>2. Կառուցելու և տրամաբանորեն հիմնավորելու սեփական մտքերը: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, | | |

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,
**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,
**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա** 1. Անձի հուզակամային ոլորտ /Հույզեր և զգացմունքներ/: **Թեմա** 2. Անձի հուզակամային ոլորտ /Կամք և կամային գործունեություն/: **Թեմա 3.** Անձի անհատական տիպաբանական առանձնահատկությունները՝ խառնվածք: **Թեմա 4.** Բնավորություն, բնավորության շեշտվածություն: **Թեմա 5**. Ընդունակություններ և ինտելեկտ: **Թեմա 6.** Միջանձնային հարաբերություններ, հաղորդակցում: **Թեմա 7.** Սոցիալական խմբեր, տեսակները:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ.
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997.
3. Հայրապետյան Դ., Կոգնիտիվ գործընթացների պրակտիկում ԵՊՀ հրատ. Երևան.
4. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.
5. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.
6. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
7. Столяренко Л.Д., Психология.учебник для вузов.-СПб.: Питер,2010. 592.
8. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005.


| | | |
|---|---|---|
| **1.0302/B24** | **2.Հայոց լեզու և գրականություն -2** | **3.4 կրեդիտ** |
| **4.4ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.2-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, հայ անվանի հեղինակների հայտնի և արժեքավոր գործերը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, գրականության զարգացման ուղղությունները, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր և բանավոր խոսք:

**Դասընթացի խնդիրները՝**

1. Ուսանողին ներկայացնել հայ գրականության ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները,
2. բնագրային երկերի ուսումնասիրության հիման վրա ձևավորել ու զարգացնել վերլուծական կարողությունները,
3. մեկնաբանել հայ հեղինակների գեղարվեստական հայտնի ստեղծագործությունների բնորոշ

առանձնահատկությունները, բացահայտել գրական երկերի պատմական-հասարակական դերի, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորությունը,

4. կատարելագործել տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողությունը,
5. մշակել շարադրությունների, ռեֆերատների, զեկուցումների, վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունները,
6. զարգացնել և կատարելոգործել կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու կարողությունները, երկխոսություններ կառուցելու միջոցով՝ ուսանողների բանավոր խոսքը,
7. գեղարվեստական արժակ և չափածո գործերի ոճական վերլուծության միջոցով զարգացնել ուսանողների գեղագիտական ճաշակի և խոսքի մշակույթը:

***9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.***

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բնութագրելու հայ գրականության առանձնահատկությունները, զարգացման միտումները, քննելու ժամանակաշրջանի հասարակական-գրական կյանքը,
2. ներկայացնելու անվանի հայ հեղինակներին, նրանց ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, հայ գրականության հիմնական ուղղո-թյունները, հոսանքներն ու ոճերը, գրական երկերի ժանրային ու գաղափարական առանձնահատկությունները,
3. ներկայացնելու մարդու բարոյական նկարագիրն ու ժամանակաշրջանի մտածողության գեղարվեստական արտացոլումը տարբեր գրողների ստեղծագործություններում,
4. դասակարգելու հայ գրականության առանձնահատկությունները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու բնագրային երկի վերլուծություններ,
2. վերլուծելու և գնահատելու դասական հեղինակների գործերը, տեսնելու յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շղթայի մեջ,
3. կատարելու գրականագիտական ուսումնասիրություններ,
4. ներկայացնելու հայ գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները, կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. գործնականում տարբերակելու գրական երկերի ժանրային պատկանելությունը,
2. վերլուծելու գրական երկերի գաղափարական բովանդակությունը և կերպարային համակարգը,
3. բանավիճելու և քննարկելու,
4. օգտվելու մասնագիտական գրականությունից և տարաբնույթ բառարաններից, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, աշխատելու թիմում:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ1.** իրականացնելու մասնագիտական գործունեություն,

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդ-ները.**

Դասախոսություն, գրավոր աշխատանք, բանավոր հարցում, գրական-գեղարվեստական նմուշների ընթերցանություն և քննարկում, զեկուցում, ռեֆերատ, շարադրություն, դասերի վարման նմուշօրինակների կազմում, համագործակցային աշխատանք, նյութերի մեկնաբանության ընթացքում տարբեր մեթոդների օգտագործում:

**12.Համառոտ բովանդակություն.**

**Թեմա 1.** Հայ գրականության շրջանափուլերը: Հայ հեթանոսական մշակույթը: Գրերի գյուտը և 5-րդ դարի հայ պատմիչները: Խորենացու «Հայոց պատմությունը»: Գրիգոր Նարեկացու տաղերը և «Մատյան ողբերգության» պոեմը: **Թեմա 2.** Հայ միջնադարյան գրականությունը, քնարերգության ընդհանուր բնութագիրը (Ֆրիկ, Քուչակ): Սայաթ-Նովայի ստեղծագործությունը: **Թեմա 3.** Հայ նոր գրականության զարգացումը: Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը: Նալբանդյանի քնարերգությունը: Րաֆֆու «Սամվել» պատմավեպը: Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը: Շիրվանզադեի «Քաոս» և «Պատվի համար» գործերը: Նար-Դոսի պատմվածքները: Զոհրապի նովելները: Թումանյանի ստեղծագործությունները: Իսահակյանի ստեղծագործությունները: Արևմտահայ բանաստեղծներ՝

Դուրյան, Մեծարենց, Վարուժան: Տերյանի քնարեր-գությունը: **Թեմա 4.** Հայ նորագույն գրականության առանձնահատկությունները: Չարենցի ստեղծագործությունները: Զորյանի պատմվածքները: Բակունցի գեղարվեստական արձակը: Դեմիրճյանի արձակը, «Վարդանանք» պատմավեպը: Սարյանի քնարերգությունը: Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: Շիրազի քնարերգությունը: Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպը: Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը: **Թեմա 5.** Արդի հայ գրականությունը: Սևակի, Սահյանի, Կապուտիկյանի, Դավթյանի, Էմինի բանաստեղծու-թյուններն ու պոեմները: Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը: Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», «Ապրած և չապրած տարիներ», «Կրակե շապիկ» գործերը:

***13.* Գնահատման մեթոդները և չափանիշները.**

**2 ընթացիկ ստուգումներ,** որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավել-լագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է հարցեր և ինքնուրույն տարաբնույթ առաջադրանքներ, հաշվի են առնվում նաև սեմինարների արդյունքները:

***14.Հիմնական գրականության ցանկը.***


1. Խորենացի Մ., Հայոց պատմություն
2. Նարեկացի Գ., Տաղեր
3. Քուչակ Ն., Հայրեններ
4. Սայաթ-Նովա, Խաղեր
5. Աբովյան Խ., Վերք Հայաստանի
6. Նալբանդյան Մ., Բանաստեղծություններ
7. Րաֆֆի, Սամվել
8. Մուրացան, Գևորգ Մարզպետունի
9. Շիրվանզադե Ալ., Քաոս, Պատվի համար
10. Նար-Դոս, Պատմվածքներ
11. Թումանյան Հովհ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ, Պատմվածքներ, Հեքիաթներ
12. Իսահակյան Ավ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ, Պատմվածքներ, Հեքիաթներ
13. Դուրյան Պ., Բանաստեղծություններ
14. Մեծարենց Մ., Բանաստեղծություններ
15. Վարուժան Դ., Բանաստեղծություններ
16. Տերյան Վ., Բանաստեղծություններ
17. Չարենց Ե., Բանաստեղծություններ, Պոեմներ
18. Զորյան Ս., Պատմվածքներ
19. Բակունց Ա., Պատմվածքներ
20. Դեմիրճյան Դ., Վարդանանք, Պատմվածքներ
21. Սարյան Գ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ
22. Զարյան Ն., Արա Գեղեցիկ
23. Շիրազ Հովհ. Բանաստեղծություններ, Պոեմներ
24. Շահնուր Շ., Նահանջը առանց երգի
25. Զարյան Կ., տատրագոմի հարսը
26. Սևակ Պ., Բանաստեղծություններ, Պոեմներ
27. Սահյան Հ., Բանաստեղծություններ
28. Կապուտիկյան Ս., Բանաստեղծություններ
29. Դավթյան Վ., Բանաստեղծություններ
30. Էմին Գ., Բանաստեղծություններ
31. Մաթևոսյան Հ., Աշնան արև
32. Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Ապրած և չապրած տարիներ, Կրակե շապիկ


**Տեսական-վերլուծական գրականության ցանկ**


1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, 1964:
2. Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, 2 հատորով, 1961-1967:
3. Աղաբաբյան Ս., Սովետահայ գրականության պատմություն հ. 1, 2,1961-1965
4. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում գիրք 1, 2, 1983-1984
5. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 2004:
6. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, 4 գրքով, 1967-1990:
7. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականության պատմություն, 2008:
8. Գասպարյան Դ., Հայ սովետական գրականության պատմություն, 1987:
9. Գասպարյան Դ., Բոդոսյան Ս., Սաֆարյան Վ., Հայ սովետական պոեզիայի պատմություն, 1987:
10. Թամրազյան Հր., Հայ քնարերգուներ, 1996:

| | |
|---|---|
| 11. | Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, 1964-1965: |
| 12. | Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5-18-րդ դդ., 1976: |
| 13. | Հայ նոր գրականության պատմություն, հատոր 1-5, 1962-1979: |
| 14. | Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, 1970: |
| 15. | Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ Գիրք Ա-Գ, 2003-2010: |

| **1.0303/B25** | **2.Մանկավարժության հիմունքներ-2** | **3.4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.3 ժամ /շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.2-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ապագա մանկավարժների տեսական մտածողության զարգացման հիման վրա մանկավարժական-մասնագիտական գործիմացության ձևավորումն է և մանկավարժական իրողություն-ների գիտական իմաստավորումը:

**Դասընթացի խնդիրները.**

1. մանկավարժական գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորումը, որն արտացոլում է ժամանակակից մանկավարժական գիտության զարգացման մակարդակը,
2. մանկավարժական երևույթները նկարագրելու, բացատրելու, նորը կանխատեսելու կարողությունների ձևավորումը,
3. մասնագիտական մանկավարժական խնդիրների լուծման համար գիտահետազոտական մեթոդների կիրառման կարողությունների ձևավորումը,
4. ապագա մանկավարժներին մասնագիտական գործունեությանը պատրաստության գործընթացում հետազոտական կարողությունների, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Բնութագրելու մանկավարժության ուսումնասիրության առարկան, բացահայտելու մանկավարժության ծագումն ու զարգացման փուլերը, սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները:
2. Նկարագրելու մանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում, բացահայտելու մանկավարժության կապը այլ գիտությունների հետ,
3. Մեկնաբանելու մանկավարժական գիտության մեթոդաբանությունը, մանկավարժական հետազոտությունների իրականացման գիտական մեթոդները, մանկավարժական գործընթացի բաղադրամասերը, փուլերը և օրինաչափությունները:
4. Ներկայացնելու ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, կրթության նպատակը և բո-վանդակությունը կրթական բարեփոխումների արդի փուլում:
5. Թվարկելու և բացատրելու անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները:
6. Սահմանելու ուսուցման և դաստիարակության կազմակերպման սկզբունքները, թվարկելու դրանց իրականացման մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, ներկայացնելու ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Կիրառելու տեսական գիտելիքները մանկավարժական տարբեր իրավիճակներում:
2. Կատարելու գիտաուսումնական հետազոտություն, վերլուծելու, համակարգելու, ամփոփելու և իմաստավորելու հետազոտության արդյունքները:
3. Օգտվելու ուսումնական տեղեկատվության տարբեր աղբյուրներից, հավաքագրելու, համակարգելու և նպատակային կիրառելու մասնագիտական տեղեկատվությունը:
4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում զուգակցելու ուսուցման և դաստիարակության ավանդական և նոր տեխնոլոգիաները, կիրառելու ուսումնադաստիարակչական արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից ձևերը:
5. Ըստ ուսուցման և դաստիարակության նպատակների ձևակերպելու ուսումնադաստիարակչական խնդիրներ և նախագծելու դրանց լուծման ուղիներ:
6. հիմնավորել մանկավարժական հասկացությունները, սկզբունքները, օրինաչափությունները ու-սումնական բանավեճերի ընթացքում, արտահայտել սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, դրսևորել համագործակցային և հաղորդակցական կարողություններ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Մասնագիտական միջավայրում դրսևորելու իր մանկավարժական մեթոդաբանական գիտելիքները:
2. Կրթական համակարգում պահպանելու աշակերտ և ուսուցիչ ուսումնական փոխհամագործակցությունը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:

| |
|---|
| 3. Մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում լուծելու ուսումնական խնդիրներ: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,<br>**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,<br>**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:<br>**Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն,<br>**Գ2.** գրագետ, ճիշտ ձևակերպել իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, գնահատել և զուգադրել լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվություններ: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսու-թյուն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կի-րառմամբ),<br>2. թիմային աշխատանքներ,<br>3. քննարկումներ,<br>4. հետազոտական սեմինարներ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը: **Թեմա 2**. Դաստիարակության սկզբունքները: **Թեմա 3.** Դաստիարակության մեթոդները միջոցները և ձևերը: **Թեմա 4**. Անձի դաստիարակությունը կոլեկտիվում և ընտանիքում: **Թեմա 5.** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական կողմերը: **Թեմա 6**. Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա 7**. Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն: **Թեմա 8.** Դասղեկի աշխատանքը հանրակրթական դպրոցում: **Թեմա 9**. Հանրակրթական դպրոցի կառավարումը և ղեկավարումը: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Մանկավարժ. հրատ., Երևան, 2005<br>2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,Զանգակ-97, Երևան, 2005<br>3. Пидкасистый П.И., Педагогика, Юраит, Москва, 2011<br>4. Подласый И.П., Педагогика, 2002<br>5. Учебник для бакалавров, Юраит, Москва, 2012<br>6. Сластенин В.А., Педагогика: Учебник, Академия, Москва, 2011<br>7. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник, Гардарики, Москва, 2007 |

| | | |
|---|---|---|
| **1.0105/ B26** | **2.Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա** | **3.2 կրեդիտ** |
| **4.2ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.2-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝**<br>▪ Ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ մանկական օրգանիզմի զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունների և օրինաչափությունների օնտոգենեզի տարիքային տարբեր փուլերում, կառուցվածքի և ֆունկցիաների փոխհարաբերությունների, առողջության | | |

պահպանման ժամանակակից մոտեցումների մասին:

- Ապագա մանկավարժներին հանգամանորեն ծանոթացնել օրգանիզմի այս կամ այն հանգամանքի ֆունկցիոնալ ախտահարման պատճառներին և կանխարգելմանը վերաբերվող տեղեկատվությանը:
- Վերջիններիս իմացությունը չափազանց կարևոր է դասարանում որոշ անոմալիաներով օժտված և համակարգային ախտահարումների հետևանքով առաջացած հիվանդություններով տառապող աշակերտների բացահայտման, և նրանց հետ համապատասխան մոտեցումներ դրսևորելու համար:

**Դասընթացի խնդիրները.**

1. ուսանողներին տալ  համակարգված գիտելիքներ տարիքային անատոմիայի տարբեր շրջաններում մարդու օրգանիզմի կառուցվածքի ու ֆումկցիաների առանձնահատկությունների մասին,
2. ձևավորել գիտական պատկերացումներ մարդու օրգան-համակարգերի և օրգանների կառուցվածքի ու ֆունկցիաների միասնականության մասին,
3. ծանոթացնել երեխայի հոգեկան և ֆիզիկական զարգացման հետազոտությունների ժամանակակից մեթոդներին,
4. ուսանողներին ծանոթացնել առողջության պահպանմանն ուղղված կարևորագույն ուղղություններին:

9.**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Բնութագրելու զարգացող օրգանիզմի տարիքային առանձնահատկությունները:
2. Բացատրելու օնտոգենեզի տարբեր փուլերում աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունները:
3. Բացատրելու մանկական օրգանիզմի ձևավորման մեջ  կարգավորիչ համակարգերի դերը:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Պարզաբանելու  մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների առանձնահատկությունները:
2. Որոշելու մարդու անհատական զարգացման տարբեր փուլերում հոգեֆիզիոլոգիական և անհատական  տիպաբանական առանձնահատկությունները և դրանց հնարավոր փոփոխությունները:
3. Կազմակերպելու ուսումնա-դաստիրակչական  գործընթացի և օրվա ռեժիմը:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Կազմակերպելու ուսումնադաստիրակչական աշխատանքներ՝ կիրառելով  անատոմիայից և ֆիզիոլոգիայից ստացած գիտելիքները:
2. Կատարելու սոցիալական մանկավարժի արհեստավարժ գործունեության հիմնական տեսակները, լուծելու հանրակրթության հաստատություններում տիպային արհեստավարժ խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Գ4.**գիտակցել  անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել  ազգային և համամարդկային արժեքները:

11.**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. պասիվ դասախոսություն
2. ակտիվ դասախոսություն
3. հարց ու պատասխան
4. զրույց
5. ինտերակտիվ դասախոսություն
6. «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում
7. հարց ու պատասխան
8. բանավեճ
9. զրույց:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առանց ընթացիկ գնահատման  քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկական օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափությունները: Տարիքային փուլեր: Օրացուցային և կենսաբանական տարիքը, նրանց հարաբերակցությունը օնտոգենեզի տարբեր փուլերում՝ կենսաբանական տարիքի սահմանման չափանիշները: Երեխայի զարգացման կրիտիկական շրջանները: **Թեմա 2.** Ժառանգականությունը և միջավայրը, նրանց ազդեցությունը մանկական օրգանիզմի զարգացման վրա: **Թեմա 3.** Կարգավորիչ համակարգերի զարգացում /հումոռալ և նյարդային/: **Թեմա 4.** Տարբեր տարիքային փուլերում ընդերային, շարժողական և զգայական համակարգերի ֆունկցիոնալ փոփոխություն: **Թեմա 5.** Ջերմակարգավորման և էներգիայի փոխանակման տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 6.** Հենաշարժիչ ապարատի օնտոգենետի-կական օրինաչափությունները: **Թեմա 7.** Ուղեղի հասունացման անատոմաֆի-զիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 8.** Երեխայի վարքագծի հոգեֆիզիոլոգիական ասպեկտները, հաղորդակցման վարքագծի ձևավորումը: Խոսք: **Թեմա 9.** Երեխայի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 10.** Երեխայի ֆունկցիոնալ զարգացման մակարդակի ամբողջական ախտորոշում: Պատրաստակամություն ուսուցման նկատմամբ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Կարապետյան Ս.Կ., Շախբերյան Ս.Ա., Տարիքային ֆիզիոլոգիա: Ուս. ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Եր., «Լույս», 1981. - 264 էջ:
2. Միքայելյան Ն.Գ., Ֆիզիոլոգիա /օնտոգենեզի և անատոմիայի հիմունքներով/ դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար. - Եր.: լույս, 1990, 440 էջ:
3. Антонова О.А., Возрастная анатомия и физиология., Москва, Высш. образование, 2006.


| | | |
|---|---|---|
| **1.0303/B27** | **2.Շախմատի տեսություն և պրակտիկա** | **3.4 կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան մանկավարժական գործընթացում առաջացած խնդիրներին տալ շախմատ առարկայի լուծումներ:

**Դասընթացի խնդիրները.**

1. ուսումնասիրել «Շախմատի դասավանդումը դպրոցում» առարկան, որը խիստ կարևոր է և մասնագիտական:
2. զինել շախմատին հատուկ գիտելիքներով, շախմատի ծագումնաբանությանը, խաղաքարերին, շախմատային հասկացություններին,
3. ծանոթացնել խաղի վարման կարգին:

**9.Դասընթացի ավարտին ուսանող ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու շախմատ խաղի նպատակը և խնդիրները, խաղի տրամաբանությունը, ռազմավարությունը:
2. Ներկայացնելու շախմատի խաղատախտակի կառուցվածքը, թվարկելու խաղաքարերը և բացատրելու նրանց գործողությունները և մոտավոր արժեքները:
3. Բնութագրելու շախ, մատ, պատ, փոխատեղում հասկացությունները, բերելու համապատասխան խաղային իրավիճակների օրինակներ:
4. Մեկնաբանելու տարբեր խաղային իրավիճակներ, բնութագրելու կոնկրետ իրավիճակներում խաղացողների հնարավորությունները, առավելությունները և հետագա քայլերի տրամաբանական ընթացքը:
5. Բացատրելու խաղաքար վերցնելու, զինվորը որևէ այլ խաղաքարով փոխարկելու, մատ, անելու, պատ ստեղծելու, փոխատեղում կատարելու իրավիճակները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ճանաչելու խաղաքարերը և դրանք ճիշտ դասավորելու շախմատի խաղատախտակի վրա, ճիշտ քայլելու բոլոր խաղաքարերով:
2. Ճիշտ որոշումներ կայացնելու խաղային տարբեր իրավիճակներում:
3. Լուծելու տարբեր բարդության շախմատային խնդիրներ, կազմելու շախմատային պարզ խնդիրներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Արժևորելու շախմատի դերը երևակայության, տրամաբանական մտածողության, կամային որակների, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման և զարգացման գործում:
2. Գնահատելու արդարությունն ու ազնվությունը:
3. Կարևորելու ուշադիր և կենտրոնացված աշխատանքը:
4. Աշխատելու թիմում:

| | |
|---|---|
| **10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,<br>**Գ6.**կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջա-ռարկայական կապեր: | |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. գործնական աշխատանք<br>3. քննարկում<br>4. զեկուցում<br>5. ինքնուրույն աշխատանք: | |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: | |
| **13.Դասընթացի համառոտ բովանդակություն.**<br>**Թեմա 1.** Նախնական շախմատային պատկերացումների և հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 2.** Խաղատախտակի և խաղաքարերի շարժման, նաև խաղաքար վերցնելու վերաբերյալ պատկերացումների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 3.** Արքայի, քայլի հասկացության իմաստի,շախմատում հերթական քայլի, արքային վերաբերվող կանոնների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 4.** Թագուհի խաղաքարի, նրա շարժման, թագուհով խաղաքար վերցնելու,հարվածի տակ գտնվող դաշտերի և այլ հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 5.** Շախ և մատ:Մատի իմաստը, արքային վերաբերվող կանոնների, պատկերացումների, հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 6.** Պատ: Շախմատի խաղի հնարավոր արդյունքների, պատի իմաստի ուսուցանման մեթոդիկա: **Թեմա 7.** Նավակ և փիղ խաղաքարերի շարժման ձևերը, նավակ և փիղ խաղաքարերով մատերի ուսուցման մեթոդիկա: **Թեմա 8.** Ձի խաղաքարը, ձիով մատերի և «պատառաքաղ» հասկացության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 9.** Զինվոր: Զինվորների սկզբնական դասավորությունը: Զինվորի շարժումը, հարվածի դաշտերը, զինվորով խաղաքար վերցնելը,շախ և մատ հայտարարելը, զինվորով կողանցիկ վերցնելու մեթոդիկան: **Թեմա 10.** Քայլի գրանցում:Պայմանական նշանները շախմատում: Խաղի /պարտիայի/ գրանցումը: Ընդարձակ և համառոտ գրանցման մեթոդիկան: **Թեմա 11.** Հավերժական շախ: Հավերժական շախը որպես ոչ-ոքիի հասնելու միջոցի ուսուցման մեթոդ: **Թեմա 12.** Մատ թագուհիով: Միայնակ թագուհիով մատի տեխնիկայի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 13**. Մատ մեկ և երկու նավակով: Մատ թագուհիով և մեկ նավակով վերջնախաղերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 14.** Մատ վերջին հորիզոնականում: Վերջին հորիզոնականում մատի տիպային դիրքերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 15.** Մանկական մատ: f2 և f7 դաշտերի թուլությունը խաղի սկզբում: Մանկական մատի տիպային դիրքերի և այլ տիպի մատերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 16.** Պաշտպանություն: Պաշտպանական տիպային դիրքեր, անպաշտպան խաղաքար, կրկնակի հարձակումը որպես տակտիկական զենքի ուսուցման մեթոդիկա: | |
| **14.Հիմնական գրականության ցանկ**.<br>1. Մ.Ս.Խպլիրյան, Մարզանունների բացատրական բառարան. Երևան: Հայաստան. 1984էջ 108.<br>2. Շախմատային խաղի դասագիրք, Հայպետհրատ, Երևան 2014: | |

| | | |
|---|---|---|
| **1.0105/B28** | **2.Թվաբանության հիմունքներ-1** | **3.4 կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Եզրափակիչ գնահատումով** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին: | | |

Դասընթացի խնդիրները.

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու թվագրության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, մեկնաբանելու թվագրության տասնորդական համակարգի գործնական նշանակությունը:
2. Ներկայացնելու և բացատրելու թվաբանական գործողությունների կատարման ալգորիթմները:
3. Ներկայացնելու և մեկնաբանելու բաժանելիության հայտանիշները, Պասկալի հայտանիշը:
4. Սահմանելու պարզ և բաղադրյալ թվերը, ձևակերպելու և մեկնաբանելու թվաբանության հիմնական թեորեմը:
5. Բացատրելու ԱՄԸԲ և ԱՓԸԲ գաղափարները, ներկայացվնելու դրանք գտնելու ալգորիթմները, մեկնաբանելու դրանցում թվաբանության հիմնական թեորեմի կիրառության տրամաբանությունը:
6. Ներկայացնելու տարրական դպրոցում կիրառվող հաշվողական հնարները:
7. Թվարկելու և բացատրելու տեքստային խնդիրների լուծման փուլերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Կատարելու գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունները երկու բնական թվերի միջև, ապացուցելու բնական թվերի հետ կատարվող գործողությունների հիմնական հատկությունները:
2. Գտնելու երկու բնական թվերի ԱՄԸԲ-ն և ԱՓԸԲ-ն, դրանք կիրառելու տեքստային խնդիրներում:
3. Տարբերակելու տեքստային խնդիրների տիպերը, դրանք տեղափոխելու գործնական դաշտ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Կիրառելուն իր գիտելիքները թվաբանությունից տարրական դպրոցում:
2. Կատարելու հաշվարկներ հաշվողական հնարների կիրառմամբ:
3. Լուծելու թվաբանության հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրներ և վարժություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքերն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ընթացիկ քննություններ** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ոչ դիրքային և դիրքային թվագրության համակարգեր: Թվագրության տասնորդական համակարգը: **Թեմա 2.** Թվաբանական գործողություններ կատարելու ալգորիթմներ տասնորդական համակարգում: Թվագրության այլ համակարգեր: **Թեմա 3.** Բազմապատիկ, բաժանարար: Երկու բնական թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարար (ԱՄԸԲ(A,B)) և ամենափոքր ընդհանուր բազմապատիկ (ԱՓԸԲ[A,B]): Էվկլիդեսի ալգորիթմը: ԱՄԸԲ(A,B)–ի և ԱՓԸԲ[A,B]-ի վերաբերյալ թեորեմներ: «Պարզ»

| |
|---|
| (բաղադրյալ) թիվ հասկացությունը: Փոխադարձաբար պարզ թվեր: **Թեմա 4.** Էրատոսթենեսի զատիչը: Թվաբանության հիմնական թեորեմը: **Թեմա 5.** Տեքստային խնդիր: Տեքստային խնդիրների լուծման հիմնական մեթոդները: **Թեմա 6.** Մոդուլի ելքեր-փոխանցումներ տղմում դասընթաց: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:<br>2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:<br>3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:<br>4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.<br>5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.<br>6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ): |

| **1. 0302/B29** | **2.Մայրենի լեզու-1** | **3.5 կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.15 / 45/ 0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7.Եզրափակիչ գնահատումով** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսումնասիրել խոսքային ավելի մեծ միավորները՝ վանկը, հնչաբառը, հնչանախադասությունը, շեշտը և հնչերանգը, բառը, զինել ուղղագրությանը և ուղղախոսությանը, բառակազմությանը վերաբերող տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով:<br>**Դասընթացի խնդիրները**<br>**1.** ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի հնչյունական, հնչյունափոխական առանձնահատկությունները,<br>**2.**........................................բացատրել ուղղախոսության-ուղղագրության նորմերը,<br>3. լեզվաքերականական գիտելիքների հիման վրա ձևավորել խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություններ,<br>**4.**........................................կարևորել բառերի՝ իբրև լեզվի ինքնուրույնաբար գործածվող հիմնական միավորների դերը խոսքում,<br>**5.** իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,<br>6. ներկայացնել բառերի ծագման ու նրանց պատմական կյանքի, բառարանների կազմման, նրանց տեսակների, բառագիտական նշանակության և այլ հարցերի ուսումնասիրությունը, լեզվաքերականական գիտելիքների հիման վրա ձևավորել խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություններ: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. սահմանելու «Հնչյունաբանություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, ներկայացնելու նրա դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,<br>2. զանազանելու հնչյունափոխական առանձնահատկությունները, գրանշանների և հնչյունների փոխհարաբերությունը,<br>3. ներկայացնելու հայոց լեզվի հնչյունաբանության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց ներքին կապերը,<br>4. սահմանելու «Բառագիտություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, մատնանշելու նրա դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,<br>5. վերարտադրելու բազմիմաստի տեսակներն ու փոփոխությունները,<br>6. ներկայացնելու ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,<br>7. ներկայացնելու հայոց լեզվի բառագիտության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց ներքին կապերը,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ*** | | |

1. կատարելու հնչյունաբանական վերլուծություն,
2. տարբերակելու հնչյունափոխության բոլոր տեսակները,
3. կիրառելու ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքները և ունակությունները պրակտիկ գործունեության մեջ,
4. կատարելու ձևույթաբանական և բառակազմական վերլուծություն, բնագրերի հիման վրա ճիշտ տարբերակելու տարբեր բառերի ծագումը, կրած ձևաիմաստային փոփոխությունները,
5. նկարագրելու բառապաշարի դասակարգման սկզբունքները և խոսքային միջավայրում օգտվելու տարբեր բառաշերտերից,
6. տեքստերում և բանավոր խոսքում ճիշտ գործառելու ձևաիմաստային տարբեր խմբի բառերը,
7. բացատրելու դարձվածքների կազմությունն ու գործածության ոճական նպատակը,

***գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ***

1. կատարելուբ լեզվաբանական հետազոտություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**
**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,
**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,
**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
**Բ5.** մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:
**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,
**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Դասախոսություն:
2. Խոսքային կամ բանավոր մեթոդ:
3. Բացատրական մեթոդ:
4. Համագործակցային աշխատանք:
5. Սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում:
6. Մտագրոհ:
7. Ռեֆերատներ:

**12.** ***Գնահատման մեթոդները***
Նախատեսված ***2 ընթացիկ քննությունները*** թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:
***Եզրափակիչ քննությունը*** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացի *համառոտ բովանդակությունը.***
**Թեմա 1**. Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության ուսումնասիրության առարկան: Արտասանվածքի վերլուծություն: Վանկը, շեշտը հայերենում: Հնչյուններ. դասակարգումը: **Թեմա 2**. Հնչյունափոխություն. տեսակները: **Թեմա 3.** Ուղղագրություն և ուղղախոսություն: **Թեմա 4.** Բառագիտություն. ուսումնասիրության առարկան: Բառ. բառի հատկանիշները: Բառիմաստի տեսակները, բառի մենիմաստությունն ու բազմիմաստությունը: Բառիմաստի փոփոխություն: Բառերի ձևաիմաստային խմբերը: **Թեմա 5.** Բառապաշար: Բառապաշարի շերտերն ու դասակարգումը: **Թեմա 6**. Բառակազմություն: Ձևույթը և նրա տեսակները: Բարդություններ. տեսակները: Դարձվածաբանություն. դասակարգումը: **Թեմա 7.** Բառարանագրություն. բառարանների տիպերը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Զ հատոր, Եր., 1974:
2. Աղայան Էդ. , Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:

4. Մարգարյան Ա. ‹ Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/› Եր., 1990:
5. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս., Ա պրակ, Եր., 1980:
6. Ա.Սուքիասյան‹ Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:

| | | |
|---|---|---|
| **1.0303/B30** | **2.Երաժշտություն և դասավանդման մեթոդիկա** | **3.4 կրեդիտ** |
| **4.4ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** գործնական աշխատանքների միջոցով զարգացնել երաժշտական կրթություն չունեցող ուսանողների երաժշտական մտաշողությունը, ռիթմի և լադի աստիճանների զգացողությունը, ապահովել ուսանողների գեղագիտական դաստիարակությունը, ուսանողին զինել տարրական դասարաններում երգ և երաժշտություն առարկայի դասավանդման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներով և կարողություններով:

**Դասընթացի խնդիրները.**

1. ուսումնասիրել երաժշտական դաստիարակության բովանդակությունը տարրական դասարանում,
2. բացահայտել երաժշտության դասավանդման տեսությունը որպես գիտելիքների, հասկացությունների, օրինաչափությունների համակարգ,
3. ուսումնաիրել երաժշտության դասի բովանդակությունը և կառուցվածքը տարբեր ժամանակաշրջաններում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու երաժշտության և երաժշտական գործունեության դերն ու նշանակությունը երեխայի կյանքում:
2. Բացատրելու հայկական և արտասահմանյան երկրների երաժշտական գործիքների և նրանցով կատարման առանձնահատկությունները:
3. Սահմանելու երաժշտության հիմնական հասկացությունները, երաժշտական ստեղծագործությունների տեսակները, երաժշտական ժանրերը և այլն:
4. Բնութագրելու տարրական դպրոցում երաժշտության ուսուցման խնդիրները, ներկայացնելու ուսուցման մեթոդները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Լսողությամբ տարբերակելու և ճանաչելու հայկական և արտասահմայան երկրների նվագարանները:
2. Տարբեր երաժշտական ստեղծագործությունների համար որոշելու ունկնդրման կազմակերպման ձևերը:
3. Աշակերտների տարիքային առանձնահատկություններից կախված ընտրելու ուսուցման համապատասխան մեթոդներ և կիրառելու մանկավարժական ժամանակակից մոտեցումներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Հանրության մեջ ցուցաբերելու երաժշտական տարրական գիտելիքներ:, ազատ հաղորդակցվել երաժիշտների հետ մասնագիտական թեմաներով:
2. Կազմակերպելու տարատեսակ երաժշտական միջոցառումներ, հանդիսություններ, զվարճանքներ:
3. Աշխատելու թիմում:
4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Ա4.**մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Գ2.** գրագետ, ճիշտ ձևակերպել իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, գնահատել և զուգադրել լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ4.**գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները:

| |
|---|
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),<br>2. թիմային աշխատանքներ,<br>3. քննարկումներ,<br>4. հետազոտական սեմինարներ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Կրտսեր դպրոցականի երաժշտական գործունեության հիմնական ձևերը: **Թեմա 2.** Երաժշտական դաստիարակությունը արտադասարանային աշխատանքների ընթացքում: **Թեմա 3.** Երաժշտական խմբակային աշխատանքների կազմակերպման ձևեր: **Թեմա 4.** Մանկական երաժշտական նվագարանների իմացություն: **Թեմա 5.** Ծանոթություն երաժշտական այբուբենին, նվագելու կարողություն: **Թեմա 6.** Բազմակողմանի երաժշտական կրթությամբ զարգացած անձնավորություն: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2004.<br>2. Աստրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Աստրյան Մ.Ա., Յոլակյան Թ.Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները, 1 մաս, Երևան, 2003.<br>3. Բաբանսկի Յու., Մանկավարժություն, հատոր 1,2, Երևան, 1986, 1987.<br>4. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,2, Երևան, 2005.<br>5. Алиев Ю.Б., Методика музыкального воспитания детей (от детского сада к начальной школе). - Воронеж, 1998. |

| **1.0303/B31** | **2.Տարիքային հոգեբանություն** | **3.4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.30/0/30** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.առանց եզրափակիչ գնահատման** | |

| |
|---|
| **8.Դասընթացի նպատակն է՝** ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը, ինչպես նաև տարիքային զարգացման շրջափուլերին, դրանց վերաբերող հոգեբանական տեսություններին:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. տալ ընդհանուր պատկերացում տարիքային հոգեբանություն առարկայի, խնդիրների, մեթոդների վերաբերյալ,<br>2. տալ գիտելիքներ հոգեկան զարգացման պայմանների, շարժիչ ուժերի, տարիքաքյին պարբերացման հիմնախնդրիների վերաբերյալ,<br>3. սովորեցնել վերլուծել հոգեկան զարգացման առանձնահատկությունները.<br>✓ մինչծննդյան, մանկիկության և վաղ մանկության տարիքում,<br>✓ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում,<br>✓ դեռահասության և պատանեկության շրջանում,<br>✓ հասուն տարիքի և ծերության շրջանում,<br>4. սովորեցնել ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների շնորհիվ լուծել պրոբլեմային իրադրություններ՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծությունը: |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու տարիքային հոգեբանության ընդհանուր հարցերը:<br>2. Սահմանելուհոգեկան զարգացում գաղափարը, նշելու նրա պայմաններն ու շարժիչ ուժերը, թվարկելու հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները:<br>3. Բացատրելու հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/, մանկիկության /նորածնություն, բուն մանկություն/ և վաղ տարիքի շրջաններում: |

4. Պարզաբանելու անձնային ոլորտի զարգացում, նախադպրոցականի հոգեկան զարգացում ու անձնավորության ձևավորում գաղափարները:
5. Բնութագրելու անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, դեռահասության և պատանեկան շրջաններում:
6. Բացատրելու դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ուսումնասիրելու և մատնանշելու տարիքային հոգեբանության հիմնախնդիրները, տարիքային շրջաբաժանման և տարիքային ճգնաժամերի հիմնահարցերը:
2. Ուսումնասիրելու և տարբերակելու հոգեկան զարգացման շարժիչ ուժերը:
3. Ինքնուրույն հետազոտելու տարբեր տարիքային փուլերում դրսևորվող հոգեկան գործընթացները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Գործնականում կիրառելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:
2. Կատարելու տարիքային հոգեբանական վերլուծություն և խնդրահարույց իրադրություններում առաջարկելու լուծումներ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Գ4.**գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսու-թյուն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կի-րառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ, հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Տարիքային հոգեբանության տեսական հիմնահարցերը: Անձի տարիքային տեսությունները: **Թեմա 3.** Անձնավորության անհատական զարգացումը: **Թեմա 4.** Տարիքային հոգեբանության մեթոդները: **Թեմա 5.** Նորածնության տարիքի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Վաղ մանկություն շրջանի վերլուծությունը: **Թեմա 7.** Հոգեկանի զարգացումը նախադպրոցական տարիքում: **Թեմա 8.** Կրտսեր դպրոցական տարիքի բնութագիրը: **Թեմա 9.** Դեռահասության տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Պատանեկության հոգեբանություն: **Թեմա 11.** Հասուն տարիքների հոգեբանություն: **Թեմա 12.** Ծերության հոգեբանության բնութագիրը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Տարիքային հոգեբանություն և մանկավարժական հոգեբանություն դասընթացների ուսումնական ծրագրեր Է.Ա..Զաքարյան: Դասընթացների ուս. ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2009թ., 41 էջ:
2. Խուդոյան Ս.Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները. - Եր.: Զանգակ-97, 2004.

3. Абрамова Г.С., Возрастная психология: Учеб. пособие для студентов вузов. – М.: Академия, 1997.
4. Абрамова Г.С., Психология человеческой жизни: Исследования геронтопсихологии: Учеб. пособие для студентов психол. фак. вузов. – М.: Изд. центр "Академия", 2002.
5. Глуханюк Н.С., Гершкович Т.Б., Поздний возраст и стратегии его освоения. – М., 2003.
6. Смирнова Е.О., Детская психология. – М., 2003.

| | | |
|---|---|---|
| **1.0303/B32** | **2.Մանկավարժության պատմություն** | **3.2 կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.3-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել հայ և համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

**Դասընթացի խնդիրները.**

1. պատմամանկավարժական գիտելիքների ձևավորում, դրանց դերի ու նշանակության գիտակցում, իմաստավորում, գնահատում,
2. պատմական, գիտական և գրական աղբյուրների հետ աշխատելու սովորողների կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորում ու զարգացում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու դասընթացի խնդիրները, ուսումնասիրության առարկան:
2. Ներկայացնելու դաստիարակության գաղափարի և դպրոցների ծագման ու զարգացման պատմությունը:
3. Բնութագրելու հնագույն, վաղ քրիստոնեության, Վերածննդի շրջանների դպրությունն ու մանկավարժական միտքը, նոր շրջանի արևմտաեվրոպական, ռուսական ու հայկական դպրությունն ու մանկավարժական միտքը:
4. Ներկայացնելու կրթության զարգացման միտումների վերլուծության պատմամանկավարժական արդի մեթոդները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ուսումնասիրելու պատմամանկավարժական աղբյուրները, կատարելու պատմական երևույթների և փաստերի պատմամանկավարժական համեմատական վերլուծություն:
5. Վերլուծելու և պարզաբանելու հնագույն, վաղ քրիստոնեության, Վերածննդի և նոր շրջանների արևմտաեվրոպական ու հայկական դպրության ու մանկավարժության առանձնահատկությունները:
2. Կատարելու հետազոտական ու ստեղծագործական աշխատանք պատմամանկավարժության շրջանակներում և կատարելու գիտական համադրումներ և եզրահանգումներ:
3. Պրակտիկայում կիրառելու դաստիարակության ուսուցման և զարգացման տարբեր տեսությունների վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Մասնագիտական խնդիրներ լուծելիս օգտվելու պատմամանկավարժական ժառանգությունից:
2. Լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ:
3. Կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ6.**կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,

3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**
Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**
**Թեմա 1.** Դաստիարակությունը նախնադարյան և ստրկատիրական հասարակարգերում: **Թեմա 2.** Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: **Թեմա 3.** Վերածննդի դարաշրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 4.** Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 5.** Նորագույն շրջանի արևմտաեվրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 6.** Խորհրդային դպրոցի ձևավորումն ու զարգացումը, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգի ձևավորումը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Կոնստանտինով Ն., Մեդինսկի Ն., Շաբաևա Մ., Մանկավարժության պատմություն: Երևան, 1972:
2. Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության: Երևան, 1958:
3. Վարդումյան Ս., Մանկավարժության պատմություն, Երևան, 2008:
4. Джуринский А.Н., История педагогики и образования: Учебник / А.Н. Джуринский. - М.: КДУ, Владос-Пр., 2013. - 400 с.
5. Джуринский А.Н., История педагогики и образования /А.Н. Джуринский. - М.: КДУ, 2013. - 400 с.
6. Капранова В.А., История педагогики в лицах: Учебное пособие / В.А. Капранова. - М.: НИЦ ИНФРА-М, Нов. знание, 2013. - 176 с.


| **1.0105/B33** | **2.Թվաբանության հիմունքներ-2** | **3.3 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**
1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***
1. թվարկելու մաթեմատիկայի կարևորագույն մեծությունները,
2. բնութագրելու հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաները, մատնանշելու դրանց հետ կապված հարցերը,
3. ներկայացնելու բնական թվի և զրոյի գաղափարների ներմուծման և ձևավորման հարցերը, բացատրելու թվարկության տասնորդական դիրքային համակարգի առանձնահատկությունները,
4. շարադրելու թվաբանական գործողությունների ներմուծման, թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապի ուսուցման հիմնախնդիրները,
5. ներկայացնելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու ուսուցման մեթոդները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***
1. կիրառելու թվաբանական գործողությունների ստուգման մեթոդները տարբեր առաջադրանքներում,
2. օգտվելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու մեթոդներից,
3. կազմակերպելու և անցկացնելու հանրահաշվական և երկրաչափական բովանդակությամբ արտադասարանական, խմբակային պարապունքներ,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***
1. Առաջադրելու և լուծելու տարբեր հանրահաշվական և երկրաչափական խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**
**Ա1**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,
**Ա2**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,
**Ա5**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.** լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
**Բ5.** մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական զիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
**Ստուգման ձևերն են.**
*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:
*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Բնական թվերի ընդլայնումը՝ ամբողջ թվեր: **Թեմա 2.** Ամբողջ թվերի ընդլայնումը՝ ռացիոնալ թվեր: **Թեմա 3.** Ռացիոնալ թվերի ընդլայնումը՝ իրական թվեր: **Թեմա 4.**Կոմբինատորիկայի հիմնական հասկացություններն ու փաստերը : **Թեմա 5.**Կոմբինատորիկայի տարրեր ՏԴՄԴ-ում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):


| | | |
|---|---|---|
| **1.0302/ B34** | **2.Մայրենի լեզու-2** | **3.4 ECTS կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համա-կարգը՝քննության առնելով խոսքի մասերի որոշման հիմունքները, բնորոշ հատկանիշները, քերականական կարգերը և ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:
**Դասընթացի խնդիրներն են՝**

1. ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները, քերականական հիմնական հասկացությունները,
2. քերականական կարգերի, քերականական իմաստների և ձևերի յուրացմամբ հարստացնել ուսանողների իմացությունը քերականական կարևորագույն հասկացությունների վերաբերյալ,
3. ներկայացնել խոսքի մասերի դասակարգման հիմունքները և տարբերակված խոսքիմասային խմբերն իրենց առանձնահատկություններով,
4. հիմնավոր գիտելիքներ ձևավորել խոսքի մասերի և դրանց քերականական յուրահատկությունների վերաբերյալ,
5. ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. նկարագրելու և մեկնաբանելու ձևաբանության ուսումնասիրության առարկան և նրա խնդիրները,
2. բացատրելու քերականական կարգերի էությունը, քերականական իմաստների և ձևերի փոխհարաբերությունները, վերարտադրելու քերականական կարգերի էությունը և դրանց տարբերակման չափանիշները,
3. թվարկելու գոյական, ածական, թվական խոսքիմասային խմբերը, բացատրելու դրանց դերը և

կիրառական յուրահատկությունները,
4. պարզաբանելու և թվարկելու խոսքի մասերի տարբերակման հիմունքները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***
1. զանազանելու խոսքի մասերի դասակարգման հիմունքները
2. զանազանելու, լուսաբանելու գոյական, ածական, թվական խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները,
3. քննարկելու և խմբավորելու խոսքի մասերն իրենց քերականական կարգերով,
4. ընդհանրացնելու խոսքի մասերի տարբեր խմբերն իրենց առանձնահատկություններով և նշանակությամբ,
5. բացատրելու և վերլուծելու բառաձևերում ձևույթների արտահայտած քերականական նշանակու-թյունները,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***
1. հակադրելու և զանազանելու տեքստում խոսքի մասերը իրենց քերականական հատկանիշներով,
2. հակադրելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու նյութական խոսքի մասերին հատուկ քերականական առանձնահատկությունները,
3. գործնականում կիրառելու նյութական խոսքի մասերին վերաբերող տեսական գիտելիքները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ2**.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. դասախոսություն
2. գործնական աշխատանք
3. բանավեճ
4. զրույց
5. խմբային աշխատանք

**12.Գնահատման մեթոդները և չափանիշները.**

***1-ին ընթացիկ ստուգում,*** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

***2-րդ ընթացիկ ստուգում,*** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության ուսումնասիրության առարկան: Քերա-կանական կարգեր: Խոսքի մասերը ժամանակակից հայերենում, դրանց որոշման հիմունքները: Փոխանունություն:Գոյական. քերականական կարգերը (թվի, հոլովի, առկայացման, անձի և ոչ անձի), իմաստային-քերականական խմբերը: **Թեմա 2.** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: Թվական. տեսակները, կազմությունը: Դերանուն. տեսակները և դրանց քերականական հատկանիշները: **Թեմա 3-4.** Բայ. կազմությունը, տեսակները, քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ:

| |
|---|
| **Թեմա 5.** Մակբայ. տեսակները և կազմությունը: **Թեմա 6.** Կապ. տեսակները, դասակարգման սկզբունքները, հոլովառությունը: Շաղկապ. տեսակները: **Թեմա 7.** Վերաբերական. տեսակները: Ձայնարկություն. տեսակները: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր.,1969:<br>2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:<br>3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, 1974:<br>4. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983:<br>5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970,1973,1977: |

| **1.0303/B35** | **2.Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -1** | **3.3 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/15/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության ժամանակակից մեթոդների կիրառման տեսությունն ու պրակտիկան, ձևավորել առաջին դասարանում 6 տարեկաններին գրել, կարդալ սովորեցնելու ուսանողների գիտելիքները և գրաճանաչության դասեր վարելու կարողությունները:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>**1.** ուսանողներին նախապատրաստել գրաճանաչության երեք շրջաններում դասեր վարելու կարողություններով,<br>**2.** մեկնաբանել վաղ ուսուցման պայմաններում առաջին դասարանում կազմակերպվող գրաճանաչության դասի առանձնահատկությունները,<br>3. ձևավորել գրաճանաչության դասեր վարելու գործընթացում կրտսեր դպրոցականների դժվարությունների պատճառները բացահայտելու և հաղթահարելու ուսանողների կարողությունները: | | |
| **9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները**<br>**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Հիմնավորելու գրաճանաչության ժամանակակից մեթոդների արդյունավետությունն ու անձնակողմնորոշիչ բնույթը:<br>2. Դիտարկելու գրաճանաչության պատմական մեթոդները:<br>3. Վերլուծելու ՀՀ գործող այլընտրանքային այբբենարանների բովանդակությունն ու կառուցվածքը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Կազմելու գրաճանաչության երեք շրջաններում իրականացվող դասերի պլաններ, քննարկելու դրանց հիման վրա իրականացվող դասերի ընթացքն ու արդյունավետությունը:<br>2. Ներկայացնելու ներառական կրթության պայմաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու ձևերը:<br>***գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ***<br>*1.* Մշակելու և ներկայացնելու հայերենի հնչյուն-տառերի ուսուցման այլընտրանքային դասեր:<br>2. Ուսումնասիրելու ներառական կրթության պայմաններում ՀՀ գործող այբբենարանների գործածման հնարավորությունները, ներկայացնելու համապատասխան առաջարկություններ:<br>3. Ստեղծելու գրաճանաչության ընթացքում կիրառվող դիդակտիկ նյութերի, խաղերի համալիր, մշակելու նրանց կիրառման մեթոդական երաշխավորություններ: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**<br>**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,<br>**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,<br>**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,<br>**Բ6.** տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում: | | |

| |
|---|
| **Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. ակտիվ դասախոսություն<br>2. խոսքային մեթոդներ<br>3. էվրիստիկ մեթոդ<br>4. համագործակցային աշխատանք<br>5. սահիկաշարի գործածություն<br>6. մտագրոհ |
| ***12.Գնահատման մեթոդները***<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 3, 3, 4 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| **13.Դասընթացի համառոտ բովանդակությունը**<br>**Ներածություն.** Մայրենիի դասավանդման մեթոդիկան որպես մանկավարժական գիտություն, կապն այլ գիտությունների հետ: **Թեմա 1**. Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում, ժամանակակից մեթոդները: **Թեմա 2**. Գրաճանաչության նախաայբբենական շրջան: **Թեմա 3**. Գրաճանաչության այբբենական շրջան: **Թեմա 4.** Գրաճանաչության հետայբբենական շրջան: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:<br>2. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:<br>3. Վ.Սարգսյան, Այբբենարան, Երևան, Մանմար, 2017:<br>4. Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Այբբենարան, Երևան, Էդիթ պրինտ, 2017:<br>5. Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2017: |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B36** | **2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-1** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/15/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին: Ուսանողի առջև բացել մաթեմատիկայի աշխարհայացքային նշանակությունը՝ մաթեմատիկան որպես միջավայրի տեսակ, մաթեմատիկան որպես լեզու, մաթեմատիկան որպես իմացության գործիք, մաթեմատիկան որպես արժեք: Ուսանողին տալ այնպիսի մաթեմատիկական գիտելիքներ, որոնց հիմքի վրա գիտականորեն հիմնավորված ու արդյունավետ կառուցվում է տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացը: Նպաստել ուսանողի մտածողության տարբեր տեսակների (խոսքային-տրամաբանական, կոմբինատորային, հավանականանակական և այլն) զարգացմանը, ուսանողի կողմից ինքնուրույն աշխատանք կատարելու, մշտապես սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ տեսական – մաթեմատիկական հիմքեր «Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա» դասընթացի արդյունավետ իրականացման համար:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,<br>2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,<br>3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,<br>4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,<br>5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Բնութագրելու «Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկան» որպես ուսումնական առարկա, ներկայացնելու կապը այլ գիտությունների հետ:<br>2. Ներկայացնելու տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթացի կառուցման առանձնահատկությունները, ձևակերպելու դասընթացի ուսումնասիրության նպատակները: | | |

3. Սահմանելու բնական թիվ, ներկայացնելու բնական թվի տասնորդական գրառումը, ներկայացնելու և բացատրելու բնական թվերի նկատմամբ կատարվող գործողությունների ալգորիթմներ:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կատարելու թեմատիկ բաշխում ըստ առարկայական ծրագրի:
2. Կազմելու դասի պլանավորումներ ըստ տեսակների:
3. Կազմելու արտադասարանական աշխատանքների պլան:
4. Հավաքագրելու և ստեղծելու նախապատրաստական շրջանի և թվարկության ուսուցման վերաբերյալ օժանդակ նյութեր, դիդակտիկական խաղեր:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Կիրառելու հաշվողական հնարները տարրական դպրոցում:
2. Լուծելու մաթեմատիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող վարժություններ և խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**13.Դասընթացի համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** «Տարրական դպրոցում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» բուհական դասընթացի նպատակը և ուսումնասիրման առարկան: **Թեմա 2.** Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի պետական չափորոշիչը: Այդ դասընթացի նպատակներն ու խնդիրները: «Մաթեմատիկա» դասընթացի բովանդակության կառուցման սկզբունքները: **Թեմա 3.** Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման կազմակերպումը, առանձնահատկությունները սակավակազմ դպրոցում: **Թեմա 4.** Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդները և միջոցները: **Թեմա 5.** Առաջին տասնյակի թվերի թվարկության ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան: **Թեմա 6.** «Հարյուրյակ» համակենտրոնում թվարկության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 7.** Թվարկության ուսուցման մեթոդիկան «հազարյակ», «բազմանիշ թվեր» համակենտրոններում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

| | | |
|---|---|---|
| **1.0303/B37** | **2.Մանկավարժական հոգեբանություն** | **3.4 կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5.30/0/30** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

**Դասընթացի խնդիրները.**

1. ներկայացնել ուսումնական գործընթացի կառուցվածքը,
2. վերլուծել մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները,
3. ծանոթացնել մանկավարժական հմտություններին և կարողություններին:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բնութագրելու մանկավարժական գործունեության դերը ուսումնական գործընթացում,
2. մատնանշելու մանկավարաժական հոգեբանության մեջ կիրառվող մեդոնեչի ամբողջականությունը, ներկայացնելու կրթության հոգեբանության դերը մանկավարժական հոգեբանության մեջ,
3. բացատրելու դաստիարակության հոգեբանության դերը մանկավարժական գործընթացում,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կարևորելու ուսուցչի դերը մանկավարժական գործընթացում,
2. մեկնաբանելու ոսուցման հոգեբանական առանձնահատկությունները,
3. որպես մանկավարժ գործնականում կիրառելու անձնային հոգեբանական մոտեցումներ,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. ընկալելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսու-թյուն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կի-րառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3.** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4.**

| |
|---|
| Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5.** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6.** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7.** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8.** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9.** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10.** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11.** Ուսուցչի անձի հոգեբանություն: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Բալյան Ա.Ա., "Մանկավարժական հոգեբանության հարցեր", Երևան: Լույս, 1983.<br>2. Էլկոնին Դ.Բ., "Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն". Երևան: Լույս, 1975.<br>3. Էլոյան Տ.Ս., "Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները", Երևան: Լույս, 1980.<br>4. Айсмонтас Б.Б., Педагогическая психология: схемы и тесты. - М.: Владос, 2004. - 208.<br>5. Басова Н.В., Педагогика и практическая психология, Ростов н/Д.: Феникс, 2000. - 416. |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B38** | **2.Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա-1** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

| |
|---|
| **8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողին զինել նախնական գիտելիքներով, ծանոթացնել թղթի տեսակներին, դրանց օգտագործման բնագավառներին, մկրատից օգտվելու անվտանգության կանոններին, գույների պարզ համադրությունից առաջացած պատկերներին և աշխատանքային դաստիարակությանը:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. դաստիարակել աշխատասիրություն, զարգացնել էսթետիկական ճաշակ,<br>2. վեր հանել տեխնոլոգիայի գիտամանկավարժական հիմքերը' տարրական դպրոցում կիրառելու համատեքստում,<br>3. բացահայտել տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմանները տարրական դպրոցում: |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ներկայացնելու դասընթացի դերը տարրական դասարաններում, նրա կառուցվածքը և բովանդակությունը,<br>2. թվարկելու և բնութագրելու տեխնոլոգիայի զարգացման հիմնական փուլերը,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. աշխատելու թղթով, ստվարաթղթով, մատիտներով, մկրատով, քանոնով, բնական և արհեստական նյութերով (տերևներով, քարերով, կորիզներով, սերմերով, կաղիններով, կոներով և այլն),<br>2. ընտրելու և կիրառելու տարրական դասարանի համար ընդունելի կերպարվեստի համապատասխան տեսակները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. դրսևորելու իրեն որպես կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի,<br>2. աշխատելու ինքնուրույն,<br>3. տարբեր իրավիճակներում կիրառելու մասնագիտական հմտությունները,<br>4. կիրառելու պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա7.**մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:<br>**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Գ6.**կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջա-ռարկայական կապեր: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),<br>2. զննական մեթոդները (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),<br>3. գործնական մեթոդները (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),<br>4. հետաքրքրությունների խթանման մեթոդները (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային |

արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),
5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),
6. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),
7. քննադատական մտածողության մեթոդները (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),
8. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),
10. վերահսկողության մեթոդները (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**
Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:
***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից**
**Թեմա1**. Ներածություն. Ծանոթություն «Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա» առարկայի հետ: **Թեմա 2.** Տեխնոլոգիայի ուսուցումը տարրական դասարաններում: **Թեմա 3.** Թղթի գործածության ոլորտը առարկայի շրջանակներում: **Թեմա 4.** Թղթի ծալման և կտրման գործողություններ (դետալներ, տրաֆարետներ,գծանմուշներ): **Թեմա 5.** Ստվարաթուղթ, ստվարաթղթից տարբեր առարկաների պատրաստում, հասկացություններ «սիմետրիկ»-ի և «ասիմետրիկ»-ի մասին: **Թեմա 6.** Տեխնոլոգիայի ուսուցման դասի կառուցվածքը և բովանդակությունը: **Թեմա 7.** Հասկացություն ապլիկացիայի մասին, ապլիկացիան տարրական դասարաններում: **Թեմա 8.** Երկրաչափական պատկերներով ապլիկացիա, «Զարդանախշեր»:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» I դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2015.:
2. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» II դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2016.:
3. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Ուսուցչի ձեռնարկ II դասարանների համար», Երևան, «Տիգրան Մեծ», 2014.:
4. Ա.Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Գործնական աշխատանքներ», Ուսումնական ձեռնարկ, «Աստղիկ գրատուն», 2011.:
5. Ժ.Ավետիսյան, «Տեխնոլոգիա», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, «Աստղիկ գրատուն», 2014.:


| | | |
|---|---|---|
| **1. 0303/B39** | **2. Կերպարվեստ և դասավանդման մեթոդիկա-1** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 15/30/0** | |
| **6. 4 կիսամյակ** | **7. առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին սովորեցնել ճանաչել, նկարագրել և մեկնաբանել կերպարվեստի ստեղծագործությունները, աշխատել նկարչական տարբեր նյութերով, դպրոցում գրագետ կազմակերպել կերպարվեստի դասերը:
**Դասընթացի խնդիրները**
1. սովորեցնել տարբերակել արվեստի տեսակներն ըստ տեսակների և ժանրերի,
2. ծանոթացնել արվեստի զարգացման պատմական կարևորագույն ժամանակաշրջաններին,
3. աշխատել կերպարվեստի տարբեր նյութերով,
4. ծանոթացնել կերպարվեստի դասավանդման մեթոդներին,
5. ծանոթացնել տարրական դպրոցում կերպարվեստի դասերի 4 տեսակների կազմակերպման ձևերին և մեթոդներին:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***
1. ճանաչելու, նկարագրելու և թվարկելու կերպարվեստի տեսակները և ժանրերը,
2. ճանաչելու և ցուցակարգելու կերպարվեստի զարգացման կարևոր փուլերը,
3. ճանաչելու և ներկայացնելու կերպարվեստի նշանավոր գործիչներին և նրանց ստեղծագործությունները,
4. ընտրելու տարրական դպրոցում կերպարվեստի դասի տեսակներն ըստ ժամաքանակների,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***
1. նկարելու նկարչական տարբեր նյութերով,

2. ցուցադրելու նկարչական տարբեր հնարներ,
3. մշակելու ստեղծագործական կարողությունները խթանող առաջադրանքներ,
4. մշակելու հանձնարարությունների հաջորդականությունը պարզից բարդ սկզբունքով՝ հաշվի առնելով ուսուցանվող առարկաների փոխկապակցվածությունը,
5. կիրառելու պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք,

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. պլանավորելու և կազմակերպելու խմբային աշխատանքներ:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և հոգեբանության (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալտնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները

**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Գ3.**պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր.

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. **խոսքային մեթոդները** (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),
2. **զննական մեթոդները** (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),
3. **գործնական մեթոդները** (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),
4. **հետաքրքրությունների խթանման մեթոդները** (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),
5. **ինտերակտիվ-կառուցողական մեթոդները** (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),
6. **համագործակցային ուսուցման մեթոդները** (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),
7. **քննադատական մտածողության մեթոդները** (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),
8. **խմբային աշխատանքի մեթոդները** (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
9. **ինքնուրույն աշխատանքի մեթոդները** (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),
10. **վերահսկողության մեթոդները** (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր և կիրառվում է դիագնոստիկ գնահատում, ուսուցանող գնահատում, ձևավորող գնահատում: Յուրաքանչյուր ստուգման 10 միավորը բաժանվում է բաղադրիչների

*1-ին ընթացիկ ստուգում.*

ա/ Թեստային աշխատանքի ժամանակ ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները՝0-6 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-4 միավոր:

*2-րդ ընթացիկ ստուգում.*

ա/ Թեստային աշխատանքի ժամանակ ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները՝0-4 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-2 միավոր:

գ/Ինքնուրույն աշխատանքը ուսանողը պատրաստում է ներկայացում որևէ նկարչի ստեղծագործությունների, արվեստի տեսակի, արվեստի ժանրի մասին, որը գնահատվում է 0-4 միավոր:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Ներածություն:** Առանկայի դերն ու նշանակությունը: **Թեմա 1.** Կերպարվեստի առաջացումը և զարգացման ժամանակաշրջանները: **Թեմա 2**. Կերպարվեստի տեսակները և ժանրերը: **Թեմա 3**. Կերպարվեստի նյութերը և տարբեր նյութերով աշխատանքի կազմակերպման ձևերը: **Թեմա 4.** Կերպարվեստի ուսուցումը տարրական դպրոցում: **Թեմա 5.** Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները և մեթոդները տարրական դպրոցում: **Թեմա 6**. Գույնի դերն ու

նշանակությունը մանկական նկարում:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Բորև Յու. Բ., Գեղագիտություն, Հայաստան, Երևան, 1982:
2. Բաղդասարյան Ք. Մ., Կերպարվեստի դասեր 1-3-րդ դասարաններում, Լույս, Երևան, 1986:
3. Նեմենսկի Բ.Մ., Գեղագիտության իմացությունը, Լույս, Երևան, 1987:
4. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մե, Զանգակ, Երևան, 2002:
5. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական ընկալման ձևավորման հիմնախնդիրները դպրոցում, Մանկավարժ, Երևան, 1999:
6. Бехтерев В.М., Первоначальная эволюция детского рисунка в объективном изучении., Прогресс, Москва, 1910.


| **1.0303/B40** | **2.Տարրական կրթության մանկավարժություն** | **3.4 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.4ժամ/շաբ.** | **5.30/0/30** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատմամբ** | |

**8. Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել տարրական դասարանների ուսուցչի մասնագիտության էությանը, մանկավարժի համար կարևոր անձնային որակներին և կարողություններին, դրանց ձեռքբերման գործընթացի ռազմավարությանն ու մարտավարությանը:

**Դասընթացի խնդիրները.**

1. ձևավորել գիտելիքներ կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,
2. ձևավորել տարրական դպրոցի դասվարի գործունեության հմտություններ և կարողություններ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Բնութագրելու 20-րդ դարի մանկավարժական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը:
2. Բացատրելու մանկավարժական մտքի գիտատեսական հիմքերը, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, հետազոտության մեթոդները, հիմնական աղբյուրները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Օգտագործելու, տեղայնացնելու մանկավարժական առաջավոր փորձը ժամանակակից պայմաններում:
2. Ըմբռնելու 20-րդ դարի մանկավարժական առաջավոր փորձը, մեթոդաբանությունը, աղբյուրները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա4.**մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. համագործակցային աշխատանք
3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. մտագրոհ և այլն:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *<u>2 ընթացիկ ստուգումներից</u>* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:
*1-ին ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
*2-րդ ստուգում.* Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**
**Թեմա 1.**Տարրական կրթության մանկավարժության առարկան, նպատակը,խնդիրները: **Թեմա 2.**Անձի զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Կրտսեր դպրոցականի անհատական-հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 3.** Ուսուցման գործընթացի կառուցվածքը տարրական դպրոցում : **Թեմա 4.** Ուսուցման գործընթացի կազմակերպման սկզբունքները և կանոնները տարրական կրթության համակարգում: **Թեմա 5.** Ուսուցման տեխնոլոգիաներ: Դրանց կիրառումը տարրական կրթության համակարգում: Ուսուցման մեթոդներ և միջոցներ: **Թեմա 6.** Կրտսեր դպրոցականների ուսումնական դրդապատճառները, նրանց դերը որպես սովորողների ստեղծագործական մտածողության խթանման միջոցներ: **Թեմա 7.** Աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը տարրական դպրոցում: **Թեմա 8.**Դաստիարակության գործընթացի էությունը, խնդիրները, սկզբունքերը,մեթոդները և ձևերը տարրական դպրոցում: **Թեմա 9.** Անձնակողմնորոշված դաստիարակության տեխնոլոգիաները տարրական դպրոցում : **Թեմա 10.** Տարրական դպրոցի և ընտանիքի համագործակցությունը: **Թեմա 11.** Տարրական դպրոցի ուսուցիչը և նրան ներկայացվող մանկավարժական պահանջները:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Ջ.Ասատրյան, «Տարրական կրթության մանկավարժություն» ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու),Եր.:Տիգրան Մեծ, 2017.-160 էջ:
2. Մանկավարժություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար / Կազմեցին Լ.Թ.Ասատրյանը և ուրիշներ.-Եր.:Արտագերս, 2017.- 360 էջ:
3. Ղույումչյան Գ.Ե.: Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք I, II , 2-րդ հրատ.- Եր.:«Բեկոր-Հրատ», 2017
4. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար:-Մանկավարժ հրատ.:Երևան 2004թ.:456 էջ:
5. Педагогика начального образования / Под ред. С. А. Котовой. Учебник для вузов. – СПБ.: Питер, 2017.- 336с.: ил.- (Серия «учебник для вузов»).
6. Максакова,В. И.

Теория и методика воспитания младших школьников: учебник и практикум для вузов / В.И.Максакова. – 2-е изд., испр. И доп.- М. : Издательство Юрайт , 2019.-206с.


| | | |
|---|---|---|
| **1.0302/B41** | **2.Մայրենի լեզու-3** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.15/15/0** | |
| **6. 5-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարա-հյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության առանձնահատկությունները և համադրելով ստացած գիտելիքները՝ մշակել գործնականում այն կիրառելու կարողություն, կենդանի խոսքը՝ գրավոր և բանավոր, ճիշտ կառուցելու հմտություն:

**Դասընթացի խնդիրները.**
1. Խոսք կառուցելու ժամանակ անսխալ կիրառել շարահյուսության քերականական կատեգորիաներ՝ նախադասության անդամների շարադասությունը,
2. կապակցման միջոցներն ու եղանակները՝ համաձայնությունն ու խնդրառությունը,
3. նախադասության կառուցվածքային տեսակները,
4. հոլովների շարահյուսական կիրառությունները,
5. նախադասության գլխավոր և երկրորդական (գոյականական և բայական անդամի լրացումները) անդամները,
6. նախադասության բազմակի անդամները, նրանց արտահայտությունը, կապակցության եղանակը, շարադասությունը և կետադրությունը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Վերարտադրելու շարահյուսության քերականական կարգերն ու նրանց առանձնահատկությունները:
2. Զանազանելու բառի, բառակապակցության ու նախադասության տարբերությունները՝ իրենց հատկանիշներով:
3. Ըմբռնելու և խոսքի մեջ ճիշտ կիրառելու պարզ նախադասության կառուցվածքային տեսակները:
4. Ըմբռնելու նախադասության գլխավոր և երկրորդական անդամների հատկանիշները, արտահայտությունը, շարադասությունը, կապակցման եղանակներն ու միջոցները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կատարել նախադասության շարահյուսական անթերի վերլուծություն:
2. Հստակորեն տարբերակելու հոլովների շարահյուսական կիրառությունները:
3. Գրավոր և բանավոր խոսքում գործածելու գրական հայերենի լեզվական նորմերով կառուցված նախադասություններ:

*գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ*

1. Կատարելու լեզվաբանական հետազոտություններ և վերլուծություններ:
2. Հաստատելու միջառարկայական կապեր:
3. Մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվություն:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ2**.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Դասախոսություն
2. Համագործակցային աշխատանք
3. Ինքնուրույն առաջադրանքներ /ռեֆերատ, աշխատանք գրական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. Սլայդների գործածություն՝ թեմաների ուսուցման ընթացքում
5. Մտագրոհ և այլն:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում,*** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

***2-րդ ընթացիկ ստուգում,*** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

**13.Դասընթացի համառոտ բովանդակություն.**

**Թեմա 1.** Շարահյուսության ուսումնասիրության առարկան. կապակցության միջոցներն ու եղանակները: Բառակապակցություն. դասակարգումը: **Թեմա 2** Նախադասություն. հատկանիշները, տեսակները: Պարզ նախադասություն. կառուցվածքային տեսակները: **Թեմա 3.** Նախադասության գլխավոր անդամներ: Ենթակա և ստորոգյալ, դրանց արտահայտությունը: **Թեմա 4.** Գոյականական և բայական անդամի

| |
|---|
| լրացումներ: **Թեմա 5.** Դերբայական դարձված և կողմնակի անդամներ: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/,Եր., 1987:<br>2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր.,1965:<br>3. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:<br>4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:<br>5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բադիկյան Խ, Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Շարահյուսություն, Եր.,1976:<br>6. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009: |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B42** | **2. “ՀԲ” Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -2** | **3.6 կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7. Եզրափակիչ գնահատումով** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսումնասիրել բացատրական ընթերցանության մեթոդով իրականացվող մայրենիի դասի կազմակերպման մ եթոդիկան 2-4-րդ դասարաններում, ձևավորել մայրենիի ինքուրույն դասընթացներ մշակելու ուսանողների կարողությունները:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>**1.** քննարկել ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի դասի բաղադրիչները,<br>**2.** դիտարկել կարդալու կարողության ձևավորման գիտամեթոդական հիմքերը,<br>3. ուսումնասիրել կարդալու որակական հատկանիշները և դրանց ձևավորմանը միտված կարդալու տեսակների իրականացման մեթոդիկան:<br>4. մշակել, փորձարկել և ներկայացնել կարդալու կարողության ձևավորմանը նպաստող փոխներգործուն մեթոդներ: | | |
| **9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները**<br>**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու մայրենիի դասերի բաղադրիչներից յուրաքանչյուրի նպատակը, խնդիրներն ու մեթոդական քայլաշարը:<br>2. Բացահայտելու լավ կարդալու կարողության ձևավորման հնարները տարրական կրթության պրակտիկայում, դիտարկելու առկա դժվարությունները, մշակելու անհրաժեշտ ցուցումներ:<br>3. Ներկայացնելու մայրենիի դասերի պլանները՝ ընթացքը համապատասխանեցնելով ուսումնասիրվող ստեղծագործությունների ժանրային առանձնահատկություններին:<br>4. Ներկայացնելու և քննարկելու ներառական կրթության պայմաններում մայրենիի դասերի իրականացման մեթոդական առանձնահատկությունները՝ տարանջատելով դրանք ըստ խնդիրների:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Մշակելու և իրականացնելու կարդալու տարբեր տեսակներով բնագրի շուրջ աշխատանքի տեխնոլոգիաներ, բացահայտելու և հիմնավորելու դրանց արդյունավետությունը:<br>2. Կիրառելու բնագրի գաղափարի և ենթատեքստի բացահայտման փոխգործուն մեթոդներ՝ գնահատելով դրանց արդյունավետությունը:<br>3. Իրականացնելու բառային աշխատանքի և բառապաշարի հարստացման մեթոդական համակարգ, մշակելու և դասակարգելու իր ստեղծած համակարգը:<br>***գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ***<br>*1.* Կատարելու սովորողների ուսումնաորոնողական գործունեությանը մղող աշխատանք, մշակելու և փորձարկելու խթանող միջոցներ , համակարգելու արդյունքները:<br>2. Ուսումնասիրելու առարկայական զուգադրումներով և եռադրումներով մայրենիի դասեր, կատարել արդյունքների վերլուծություն, կանխատեսելու արդյունքները ու գնահատելու ձեռքբերումները<br>3. Մշակելու ստեղծագործական-հետազոտական աշխատանքի իրականացման քայլաշար, ամփոփելու փորձարարական աշխատանքների արդյունքները, ներկայացնելու առաջարկություններ: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**<br>**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, | | |

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,
**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:
**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. ակտիվ դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդներ
3. էմպիրիկ մեթոդ
4. խմբային աշխատանք
5. տեսաասահիկների պատրաստում և նրանց միջոցով դասերի վարում
6. հիմնախնդիրների ինքնուրույն վերլուծություն
7. հետազոտական աշխատանք /մասնագիտական գրականության վերաբերյալ/:

***12.Գնահատման մեթոդները***
Նախատեսված են ***2 ընթացիկ քննություններ***
**1-ին ընթացիկ քննությունը** թեստային է՝ 5 միավոր առավելագույն արժեքով:
**2-րդ ընթացիկ քննությունը** կատարած հետազոտական աշխատանքի գնահատումն է՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Տե՛ս «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ը:
***Եզրափակիչ քննությունը*** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացի համառոտ բովանդակությունը**
**Թեմա 1**. Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում: **Թեմա 2**. Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը: **Թեմա 3**. Գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները: **Թեմա 4.** Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի- 2» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե., Լույս, 2007:
3. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Երևան, Էդիթ պրինտ, 2018:
4. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2020:


| | | |
|---|---|---|
| **1.0303/B43** | **2. “ՀԲ” Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2** | **3.6 կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7.Եզրափակիչ գնահատումով** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող թվաբանական գործողությունների իմաստի մեկնաբանումը տեսաբազմային և աքսիոմատիկ տեսության տեսանկյուններից, դրանց հատկությունների և հաշվման հնարների ուսումնասիրման մեթոդիկաներին, անվանական թվերով թվաբանական գործողությունների կատարման մեթոդիկային, հետազոտել թվաբանական գործողությունների ներմուծման տրամաբանական հաջորդականությունը, ինչպես նաև հաշվողական հնարների ձևավորման ժամանակ աշակերտների կողմից թույլ տրվող սխալները:
**Դասընթացի խնդիրները.**
1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:
6. դասակարգել բազմանիշ թվերի սահմանում թվաբանական գործողությունների կատարման ժամանակ կրտսեր դպրոցականների թույլ տրված սխալներն ըստ գիտելիքների սկզբնաղբյուրների
7. մշակել թվաբանական գործողությունների կատարման ժամանակ սխալների կանխման ուղիներ,
8. կազմել դիագրամներ՝ սխալների կանխարգելման միջոցներ ձեռնարկելուց հետո ստացված արդյունքներն ախտորոշելու համար:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Մեկնաբանելու թվաբանական գործողությունների ուսուցման հաջորդականության տրամաբանությունը, գործողությունների կատարման ալգորիթմները (բանավոր և գրավոր), ներկայացնելու հիմնական հատկությունների և օրենքների կիրառման առանձնահատկությունները մաթեմատիկայի տարրական դասընթացում:
2. Բացահայտելու թվաբանական գործողությունների իմաստը տեսաբազմային տեսանկյունից:
3. Հիմնավորելու թվաբանական գործողությունների հիմքում ընկած տեսական գիտելիքները:
4. Պարզաբանելու յուրաքանչյուր թվաբանական գործողության իմաստը առարկայական իրավիճակում:
5. Հիմնավորելու տարրական դասարաններում ուսուցվող մեծությունների և դրանց միավորների գիտական մեկնաբանությունները և ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները տարրական դպրոցում:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Գիտամեթոդական բարձր մակարդակով մեկնաբանելու թվաբանական գործողությունների կատարման ալգորիթմները, ներկայացնելու այդ գործողությունների ուսուցման մեթոդիկայի հարցերը, տարանջատելու երկրաչափական և ոչ երկրաչափական մեծությունների ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները տարրական դպրոցում:
2. Տեսականորեն մեկնաբանելու թվաբանական գործողությունների կատարման ժամանակ յուրաքանչյուր թույլ տված սխալի հիմքը և առաջարկելու դրանց կանխման ուղիներ:
3. Առաջարկելու ռացիոնալ հաշվման հնարներ աղյուսակային և արտաաղյուսակային դեպքերի յուրացման համար:
4. Գործնական եղանակով մոդելավորել թվաբանական գործողությունների ուսումնասիրումն ըստ համակենտրոնների:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Կիրառելու հաշվողական տարբեր մեթոդական հնարները տեքստային խնդիրներում, երկրաչափական նյութի և մեթոդիկայի այլ նյութի ուսուցման ժամանակ:
2. Կիրառելու հաշվման տասնորդական համակարգում թվաբանական գործողությունների կատարման ալգորիթմը հաշվման այլ համակարգերում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ
5. հետազոտական աշխատանք /մասնագիտական գրականության վերաբերյալ/:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված են ***2 <u>ընթացիկ քննությունները</u>***, որոնցից **<u>1-ինը</u>** թեստային է՝ 5 միավոր առավելագույն արժեքով, **<u>2-րդը</u>** կատարած հետազոտական աշխատանքի գնահատումն է՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Տե՛ս «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ը:

***<u>Եզրափակիչ քննությունը</u>*** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացի համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Թվաբանական գործողությունների ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկայի ընդհանուր

| |
|---|
| հարցեր: **Թեմա 2.** «Տասնյակ» համակենտրոնում հաշվողական հնարների ձևավորման մեթոդիկան: **Թեմա 3.** «Հարյուրյակ» համակենտրոնում «Գումարում» և «Հանում» գործողությունների ուսումնասիրության և հաշվողական հնարների ձևավորման մեթոդիկան: **Թեմա 4.** «Հարուրյակ» համակենտրոնում «Բազմապատկում» և «Բաժանում» գործողությունների ուսումնասիրության և հաշվողական հնարների ձևավորման մեթոդիկան: **Թեմա 5.** «Հազարյակ» համակենտրոնում թվաբանական գործողությունների ուսումնասիրության և հաշվողական հնարների ձևավորման մեթոդիկան: **Թեմա 6.** «Բազմանիշ թվերի» համակենտրոնում թվաբանական գործողությունների ուսումնասիրության և հաշվողական հնարների ձևավորման մեթոդիկան: **Թեմա 7.** Տարրական դպրոցում երկրաչափական մեծությունների ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան: **Թեմա 8.** Տարրական դպրոցում ոչ երկրաչափական մեծությունների ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:<br>2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:<br>3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:<br>4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.<br>5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.<br>6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):<br>7. Тихоненнко А.В. и др., Теоретические и методические основы изучения математики в начальной школе.-Ростов н/Д: Феникс, 2008.-349с. |

| **1.0303/B44** | **2.Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա-2** | **3.3 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողին զինել նախնական գիտելիքներով, ծանոթացնել թղթի տեսակներին, դրանց օգտագործման բնագավառներին, մկրատից օգտվելու անվտանգության կանոններին, գույների պարզ համադրությունից առաջացած պատկերներին և աշխատանքային դաստիարակությանը:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. դաստիարակել աշխատասիրություն, զարգացնել էսթետիկական ճաշակ,<br>2. վեր հանել տեխնոլոգիայի գիտամանկավարժական հիմքերը' տարրական դպրոցում կիրառելու համատեքստում,<br>3. բացահայտել տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմանները տարրական դպրոցում: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու դասընթացի դերը տարրական դասարաններում, նրա կառուցվածքը և բովանդակությունը:<br>2. Թվարկելու և բնութագրելու տեխնոլոգիայի զարգացման հիմնական փուլերը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Աշխատելու թղթով, ստվարաթղթով, մատիտներով, մկրատով, քանոնով, բնական և արհեստական նյութերով (տերևներով, քարերով, կորիզներով, սերմերով, կաղիններով, կոներով և այլն):<br>2. Ընտրելու և կիրառելու տարրական դասարանի համար ընդունելի կերպարվեստի համապատասխան տեսակները:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Դրսևորելու իրեն որպես կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի:<br>2. Աշխատելու ինքնուրույն:<br>3. Տարբեր իրավիճակներում կիրառելու մասնագիտական հմտությունները:<br>4. Կիրառելու պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա7.**մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները: | | |

| |
|---|
| **Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Գ6.**կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջա-ռարկայական կապեր։ |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),<br>2. զննական մեթոդները (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),<br>3. գործնական մեթոդները (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),<br>4. հետաքրքրությունների խթանման մեթոդները (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),<br>5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),<br>6. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),<br>7. քննադատական մտածողության մեթոդները (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),<br>8. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),<br>9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),<br>10. վերահսկողության մեթոդները (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն)։ |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր։<br>*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/։<br>*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում։ |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից**<br>**Թեմա 1.** Կառուցումներ երկրաչափական պատկերներով։ **Թեմա 2.** Թղթով ապլիկացոն աշխատանքներ, հարթ տիպի ապլիկացիա։ **Թեմա 3.** Ծավալային ապլիկացիա։ **Թեմա 4.** Թղթի ծավալային խաղալիքներ, բնական տերևներով ապլիկացիա։ **Թեմա 5.** Ստեղծագործական ապլիկացիաներ։ **Թեմա 6.** Փափուկ խաղալիքների պատրաստում։ **Թեմա 7.** Հասկացություն խճանկարի մասին, խճանկարի պատրաստում։ **Թեմա 8.** Թղթով խճանկար, միագույն, երկգույն, բազմագույն խճանկար (մրգեր, բանջարեղեններ)։ |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» I դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2015.։<br>2. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» II դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2016.։<br>3. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Ուսուցչի ձեռնարկ II դասարանների համար», Երևան, «Տիգրան Մեծ», 2014.։<br>4. Ա.Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Գործնական աշխատանքներ», Ուսումնական ձեռնարկ, «Աստղիկ գրատուն», 2011.։<br>5. Ժ.Ավետիսյան, «Տեխնոլոգիա», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, «Աստղիկ գրատուն», 2014.։ |

| | | |
|---|---|---|
| **1. 0303/B45** | **2. Կերպարվեստ և դասավանդման մեթոդիկա-2** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 3 ժամ /շաբ.** | **5. 15/30/0** | |
| **6. 5-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8. Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին սովորեցնել կերպարվեստի դասավանդման հիմնական մեթոդները և օրենքները, դրանք գիտակցորեն կիրառել մասնագիտական խնդիրների ձևակերպման և լուծման ժամանակ։<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. ձևավորել գեղագիտական վերաբերմունք և ճաշակ,<br>2. կազմել տարրական դպրոցի կերպարվեստ առարկայի տարեկան օրացուցային պլան և դասի պլան-կոնսպեկտ՝ պլանավորելով դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը։ | | |
| **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*** | | |

1. Թվարկելու և մեկնաբանելու կերպարվեստի դասավանդման մեթոդները տարրական դպրոցում:
2. Թվարկելու և մեկնաբանելու Տիֆլոմանկավարժության մեթոդները:
3. Բացատրելու կերպարվեստի դասի պլան-կոնսպեկտի կառուցվացքի տրամաբանությունը դասի 4 տեսակների համար:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կազմակերպելու երևակայությունը խթանող առաջադրանքներ:
2. 1-4 դասարաններում կազմակերպելու կերպարվեստի դասեր՝ տեղին կիրառելով դասավանդման մեթոդները:
3. ԴԿԱ-ի ձևերի կիրառումով կազմելու հանձնարարությունների հաջորդականությունը պարզից բարդ սկզբունքով՝ հաշվի առնելով ուսուցանվող առարկաների փոխկապակցվածությունը:
4. Կազմելու ստեղծագործական կարողությունները խթանող առաջադրանքներ տիֆլոմանկավարժության սկզբունքներով:
5. Կազմելու հանձնարարությունների հաջորդականությունը պարզից բարդ սկզբունքով՝ հաշվի առնելով ուսուցանվող առարկաների փոխկապակցվածությունը 1-4 դասարանների համար:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Կատարելու տեղեկատվության հավաքագրում և անհրաժեշտ գրականության մշակում:
2. Կազմակերպելու անհատական, խմբային և կոլեկտիվ աշխատանքներ՝ հաշվի առնելով կերպարվեստի դաստիարակչական նշանակությունը:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1**. ներկայացնել մանկավարժության և հոգեբանության (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները

**Ա5.** ներկայացնել հումանիտար, սոցիալտնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները

**Բ1.** պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ2.** լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Գ4.** պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր.

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. **խոսքային մեթոդները** (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),
2. **զննական մեթոդները** (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),
3. **գործնական մեթոդները** (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),
4. **հետաքրքրությունների խթանման մեթոդները** (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),
5. **ինտերակտիվ-կառուցողական մեթոդները** (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),
6. **համագործակցային ուսուցման մեթոդները** (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),
7. **քննադատական մտածողության մեթոդները** (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),
8. **խմբային աշխատանքի մեթոդները** (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
9. **ինքնուրույն աշխատանքի մեթոդները** (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),
10. **վերահսկողության մեթոդները** (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր և կիրառվում է դիագնոստիկ գնահատում, ուսուցանող գնահատում, ձևավորող գնահատում: Յուրաքանչյուր ստուգման 10 միավորը բաժանվում է բաղադրիչների

***1-ին ընթացիկ.***

ա/ Բանավոր հարցման ժամանակ, որը կատարվում է նախօրոք տրամադրված հարցաշարի հիման վրա, ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները ՝0-6 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-4 միավոր:

***2-րդ ընթացիկ.***

ա/ Թեստային աշխատանքի ժամանակ ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները ՝0-4 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-2 միավոր:

գ/ Ինքնուրույն աշխատանքը ուսանողը կազմում է 4 դասի համար պլան-կոնսպեկտ, յուրաքանչյուր դասարանի և յուրաքանչյուր դասի տեսակի համար մեկական, որը գնահատվում է 0-4 միավոր:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Կերպարվեստի կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը: **Թեմա 2.** Գեղագիտական վերաբերմունքի ձևավորում և զարգացում: **Թեմա 3.** Արվեստի թեմաներով զրույցների կազմակերպում: Աբստրակցիայի և ֆանտազիայի դերը մանկական նկարում: **Թեմա 4**. Կերպարվեստային ակտիվության տարբեր տեսակների արտահայտչամիջոցների, տեսակներին համապատասխան նյութերի կիրառման իմացություն: **Թեմա 5.** Կերպարվեստային գործունեության միջոցով ինքնիրացման գործընթացի իրականացում: **Թեմա 6.**Ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառում: **Թեմա 7** .Կերպարվեստի դասավանդման ժամանակակից մեթոդները տարրական դպրոցում: Անհատական և խմբակային աշխատանքների կազմակերպում: Անհատական մոտեցման ցուցաբերում: **Թեմա 8.** Ներառական կրթությունը կերպարվեստում:

**14. Հիմնական գրականության ցանկ**.


1. Բորև Յու. Բ., Գեղագիտություն, Հայաստան, Երևան, 1982:
2. Բաղդասարյան Ք. Մ., Կերպարվեստի դասեր 1-3-րդ դասարաններում, Լույս, Երևան, 1986:
3. Նեմենսկի Բ.Մ., Գեղագիտության իմացությունը, Լույս, Երևան, 1987:
4. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մեջ, Զանգակ, Երևան, 2002:
5. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական ընկալման ձևավորման հիմնախնդիրները դպրոցում, Մանկավարժ, Երևան, 1999:
6. Бехтерев В.М., Первоначальная эволюция детского рисунка в объективном изучении., Прогресс, Москва, 1910.


| | | |
|---|---|---|
| **1.0105/B46** | **2.Հանրահաշվական կառույցներ** | **3.4 կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.30/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7.Եզրափակիչ գնահատումով** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

<u>**Դասընթացի խնդիրները**</u>.

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու ըստ մոդուլի թվաբանական գործողությունները և դրանց հատկությունները, բերելու դրանց կիրառության օրինակներ:
2. Օրինակների միջոցով մեկնաբանելու ասույթների և բազմությունների հետ կատարվող գուծողությունները:
3. Նկարագրելու խումբ, օղակ, դաշտ կառույցների հետ կատարվող գուծողությունները: Կատարելու գործողություններ Պեանոյի աքսիոմային համակարգում:
4. Մեկնաբանելու և կիրառելու կարգի առնչության տեսաբազմային համակարգը:
5. Սահմանելու «Գումարում» («Գումար») գործողությունը և ապացուցելու նրա հատկությունները (տեղափոխականություն, զուգորդականություն) տեսաբազմային մոտեցմամբ:
6. Սահմանելու «Հանում» («Տարբերություն») գործողությունը և ապացուցելու նրա հատկությունները՝ a-(b-c)=(a-b)+c)=(a+c)-b, a-(b+c)=(a-b)-c=(a-c)-b) տեսաբազմային մոտեցմամբ:
7. Սահմանելու «Բազմապատկում» («Արտադրյալ») գործողությունը և ապացուցելու նրա հատկությունները (տեղափոխականություն, զուգորդականություն, բաշխականություն) տեսաբազմային մոտեցմամբ:
8. Սահմանելու «Բաժանում» գործողութունը և ապացուցելու նրա հատկությունները՝ a:(b:c)=(a· c): b,

(a+ b): c=a: c+b:c,    (a:(b·c)=(a: c): b) տեսաբազմային մոտեցմամբ:

9. Ներկայացնելու գումարման և հանման, բազմապատկման և բաժանման գործողություններով կառույցները ՏԴՄԴ-ում:
10. Ներկայացնելու տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդներն ու կազմակերպումը:
11. Սահմանելու և մեկնաբանելու «ալգորիթմ» հասկացությունը, ներկայացնելու նրա տեսակները և տրման ձևերը:
12. Մեկնաբանելու մաթեմատիկայում ալգորիթմների կիրառության տրամաբանությունը, բացատրելու ալգորիթմական լուծելիության գաղափարը:
13. Բացատրելու մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կատարելու գործողություններ ըստ մոդուլի:
2. Կատարելու գործողություններ Պեանոյի աքսիոմային համակարգում:
3. Կատարելու գործողություններ ասույթների և բազմությունների նկատմամբ:
4. Բազմակողմանի կիրառելու մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը:
5. Տարբերակելու և բնութագրելու ալգորիթմական և ստեղծագործական մտածողությունները, վեր հանելու նրանց միջև կապերը:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Կիրառելու ձեռք բերած գիտելիքները տարրական դպրոցում:
2. Կիրառելու հաշվողական  հնարները տարրական դպրոցում:
3. Լուծելու մաթեմատիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրներ և  վարժություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ քննությունները*** թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

***<u>Եզրափակիչ քննությունը</u>*** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա** 1. Հանրահաշվական գործողություններ: **Թեմա 2**. Հանրահաշվական գործողություններով կառույցներ: **Թեմա 3**. Պեանոյի աքսիոմային համակարգը: **Թեմա 4**. Թվաբանական գործողություններ պեանոյի համակարգում: **Թեմա 5**. Բնական թվերի համակարգի տեսաբազմային մոդելը: **Թեմա 6**. Գումարման և հանման գործողություններով կառույցները ՏԴՄԴ-ում: բազմապատկման և բաժանման գործողություններով կառույցները ՏԴՄԴ-ում: **Թեմա 7**. Ալգորիթմներ. Ալգորիթմները մաթեմատիկայում և կրտսեր դպրոցականի ալգորիթմական մտածողության զարգացումը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:

3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

| | | |
|---|---|---|
| **1.0302/ B47** | **2.Մայրենի լեզու-4** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.15/15/0** | |
| **6. 6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8. Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարա-հյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բարդ նախադասության բաղադրիչների կապակցության միջոցներն ու եղանակները, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների առանձնահատկությունները:

**Դասընթացի խնդիրները.**

Խոսք կառուցելու ժամանակ անսխալ կիրառել շարահյուսության քերականական կատեգորիաներ՝ նախադասության անդամների շարադասությունը, կապակցման միջոցներն ու եղանակները՝ համաձայնությունն ու խնդրառությունը, նախադասության կառուցվածքային տեսակները, հոլովների շարահյուսական կիրառությունները:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. տարբերակելու բարդ նախադասության տեսակներն ու առանձնահատկությունները,
2. մեկնաբանելու բարդ համադասական նախադասության դասակարգման հիմունքները,
3. ներկայացնելու բարդ ստորադասական նախադասության դասակարգումը,
4. բնութագրելու բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները և տեսակները,
5. սահմանելու մեջբերվող խոսք, ուրիշի անուղղակի խոսք գաղափարները, բացատրելու նրանց կետադրությունը,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու ցանկացած տեսակի պարզ և բարդ նախադասության շարահյուսական վերլուծություն,
2. տարբերակելու նախադասության կառուցվածքային տեսակները,
3. փոխակերպելու ԴԴ-ով պարզ և բարդ ստորադասական նախադասությունները,
4. կազմելու առաջադրված նախադասությունների գծապատկերը,
5. փոխակերպելու մեջբերվող խոսքը անուղղակի խոսքի:

***գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ***

1. կատարելու լեզվաբանական հետազոտություններ և վերլուծություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Դասախոսություն
2. Համագործակցային աշխատանք
3. Ինքնուրույն առաջադրանքներ /ռեֆերատ, աշխատանք զական երկերի վրա, էսսե, շարադրություն և

այլն/
4. Սլայդների գործածություն՝ թեմաների ուսուցման ընթացքում
5. Մտագրոհ և այլն:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ ստուգում,** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

**2-րդ ընթացիկ ստուգում,** գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

**13.Դասընթացի համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Բարդ նախադասություն. հատկանիշները: Բաղադրիչների կապակցության միջոցներն ու եղանակները: Բարդ համադասական նախադասություն. առանձնահատկությունները: **Թեմա 2.** Բարդ ստորադասական նախադասություն. առանձնահատկությունները, դասակարգումը՝ ըստ ստորադաս բաղադրիչի գործառության: Փոխակերպում: **Թեմա 3.** Բազմաբարդ նախադասություն. տեսակները: **Թեմա 6.** Ուղղակի խոսք: Կետադրություն:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/,Եր., 1987:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր.,1965:
3. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:
4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:
5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բադիկյան Խ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր.,1976:
6. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009:


| | | |
|---|---|---|
| **1.0105/B48** | **2.Կոմբինատորիկայի տարրեր** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու կարգավորություններ, տեղափոխություններ, զուգորդություններ:
2. Սահմանելու պատահույթներ, նշելու նրա տեսակները՝ հավաստի պատահույթ, անհնար պատահույթ, պատահական պատահույթ, տարրական պատահույթ, հակադարձ պատահույթ, անհամատեղելի պատահույթներ:
3. Ներկայացնելու հավանականությունների դասական, երկրաչափական, վիճակագրական սահմանումները, սահմանելու պայմանական և լրիվ հավանականություն, ներկայացնելու հավանականության տրման Բայեսի և Բեռնուլիի բանաձևերը:
4. Սահմանելու պատահական մեծություն, ներկայացնելու պատահական մեծության բաշխման ֆունկցիան, մեկնաբանելու և ներկայացնելու բաշխման ֆունկցիայի գրաֆիկը:
5. Սահմանելու և բացատրելու պատահական մեծության միջին արժեք և դիսպերսիա հասկացությունները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կատարելու գործողություններ բազմությունների նկատմամբ:
2. Լուծելու կարգավորություններին, տեղափոխություններին և զուգորդություններին վերաբերող խնդիրներ:
3. Կիրառելու հավանականության դասական և երկրաչափական սահմանումները խնդիրներ լուծելու ժամանակ,
4. Լուծելու պայմանական հավանականության, լրիվ հավանականության, Բայեսի և Բեռնուլիի բանաձևերի կիրառությունը պահանջող խնդիրներ:
5. Լուծելու բաշխման ֆունկցիային վերաբերող խնդիրներ և կառուցելու բաշխման ֆունկցիայի գրաֆիկը:
6. Կիրառելու մաթեմատիկական սպասումը և դիսպերսիան հավանականային խնդիրներում:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Կիրառելու հաշվողական հնարները տարրական դպրոցում:
2. Լուծելու կոմբինատորիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Կարգավորություններ, տեղափոխություններ և զուգորդություններ: **Թեմա 2.** Հավանականությունների տեսության տարրերը: **Թեմա 3.** Հավանականության դասական, վիճակագրական, երկրաչափական սահմանումները: **Թեմա 4.** Պայմանական հավանականություն: Պատահույթների անկախություն: **Թեմա 5.** Լրիվ հավանականություն, Բայեսի և Բեռնուլիի բանաձևեր: **Թեմա 6.** Պատահական մեծություն: բաշխման ֆունկցիա, նրա հատկությունները և գրաֆիկը: **Թեմա 7.** Պատահական մեծության մաթեմատիկական սպասում և դիսպերսիա: Նրանց հատկությունները

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):


| | | |
|---|---|---|
| **1.0303/B49** | **2. "ՀԲ" Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -3** | **3.4 կրեդիտ** |

| | |
|---|---|
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել տարրական դպրոցում լեզվական նախագիտելիքների և տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդիկան և իրականացման քայլաշարը, ձևավորել ոչ ստանդարտ մեթոդներով լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդական շղթա:

**Դասընթացի խնդիրները.**

1. Քննարկել մայրենիի լեզվական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդներն ու եղանակները:
2. Յուրացնել հայոց լեզվի բառակազմության, ձևաբանության և շարահյուսության ուսումնասիրության գործընթացների մեթոդական քայլաշարը 1-4-րդ դասարաններում:
3. Մշակել համակցված դասի մեթոդական քայլաշարով մայրենիի լեզվական գիտելիքների յուրացման գործընթացը արդյունավետ կազմակերպելու մեթոդական հնարներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

**9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Տարբերակելու լեզվական նախագիտելիքների և տարրական գիտելիքների սահմանները և նրանց յուրացման փուլերի խնդիրները, մշակելու, փորձարկելու աշակերտակենտրոն մեթոդները:
2. Մեկնաբանելու լեզվական նախագիտելիքների ձեռքբերման գործընթացի էությունը, նրա իրականացման գործնականության ապահովման մեթոդաբանությունը, հիմնավորելու և քննարկելու առկա խնդիրները:
3. Հիմնավորելու լեզվական նախագիտելիքների և տարրական գիտելիքների ուսումնասիրման հաջորդականությունը, մոդելավորելու համագործակցային գործունեության ձևերը:
4. Բացահայտելու ներառական կրթության պայմաններում լեզվական տարրական գիտելիքները բնագրի շուրջ աշխատանքի գործընթացում ուսումնասիրելու հնարավորությունները, բացահայտելու և հիմնավորելու առկա խնդիրները

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Մշակելու և իրականացնելու կարդալու տարբեր տեսակներով բնագրի շուրջ աշխատանքի տեխնոլոգիաներ, ընդարձակելու դրանց ցանկը, հիմնավորելու ընտրված սկզբունքները:
2. Կիրառելու բնագրի գաղափարի և ենթատեքստի բացահայտմանը նպաստող փոխգործուն մեթոդներ, մշակելու, փորձարկելու և ամփոփելու մեթոդների արդյունավետությունը:
3. Իրականացնելու բառային աշխատանքի և բառապաշարի հարստացման մեթոդական համակարգ, ձևավորելու փաթեթային խմբեր:

***գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ***

1. Կատարելու սովորողների ուսումնառրոնողական գործունեությունը մշակող աշխատանք, ամփոփելու արդյունքները:
2. Ուսումնասիրելու առարկայական զուգադրումներով և եռադրումներով մայրենիի դասեր, կատարելու արդյունքների վիճակագրական վերլուծություն և դիտարկումներ:
3. Մշակելու ստեղծագործական-հետազոտական աշխատանքի իրականացման քայլաշար, ամփոփելու փորձարարական աշխատանքների արդյունքները, ձևավորելու երաշխավորություններ:

**10.Դասընթացը ձևավորում է** **<u>կրթական ծրագրի</u>** **հետևյալ վերջնարդյունքները**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.** մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. ակտիվ դասախոսություն

| |
|---|
| 2. խոսքային կամ բանավոր մեթոդ<br>3. փոխգործուն մեթոդներ<br>4. խմբային աշխատանք<br>5. վարժություններ սահիկաշարով<br>6. թեմատիկ ներկայացումներ<br>7. հետազոտական աշխատանք /մասնագիտական գրականության վերաբերյալ/: |
| ***12.Գնահատման մեթոդները.***<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Կատարած հետազոտական աշխատանքի գնահատում: Տե՛ս «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ը: |
| **13.Դասընթացի համառոտ բովանդակությունը**<br>**Թեմա 1**. Քերականական գիտելիքների ուսումնասիրման սկզբունքները, առանձնահատկությունները: Ծրագիր, դասագիրք: **Թեմա 2.** Լեզվական վարժությունների համակարգը, տեսակները: **Թեմա 3**. Լեզվական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկան: **Թեմա 4.** Շարահյուսական տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդիկան: **Թեմա 5.** Խոսքի մասերի ուսումնասիրման մեթոդիկան: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:<br>2. Գյուլամիրյան Ջ, Խոսքի զարգացում, Երևան, 2014:<br>3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 3» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե., Լույս, 2020:<br>4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե., Լույս, 2020:<br>5. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Մայրենի 3, Երևան, Էդիթ պրինտ, 2020:<br>6. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2020:<br>7. Խաչատրյան Լ. Միրումյան Մ. Հայերանագիտական տերմինների ուսումնական բառարան<br>8. Ստեփանյան Ռ. Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական գործիքներ, Երևան, 2019: |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B50** | **2. “ՀԲ” Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-3** | **3.4 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ծանոթացնել տարրական դասարաններում ուսումնասիրվող տեքստային խնդիրների ուսումնասիրման մեթոդիկային, ուսուցանվող տեքստային խնդիրների տեսակներին և դրանց մեթոդական առաձնահատկություններին, դասակարգել պարզ խնդիրներն ըստ տարրական դասարանների մաթեմատիկայի դասըթնացում ուսումնասիրվող մաթեմատիկական հասկացությունների, ինչպես նաև հետազոտել կրտսեր դպրոցականների խնդիրների լուծման հոգեբանամանկավարժական դժվարությունները:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,<br>2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,<br>3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,<br>4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,<br>5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:<br>6. պարզաբանել պարզ խնդիրների դերը կրտսեր դպրոցականին մաթեմատիկա ուսուցանելու համակարգում:<br>7. դիտարկել կրտսեր դպրոցականների գործունեության կազմակերպումը՝ համեմատական մեծությունների վերաբերյալ խնդիրները որպես ֆինանսական գործառույթի վերհանման միջոց,<br>8. մեկնաբանել մտավոր գործունեության հնարների դերը տեքստային խնդիրների շուրջ մեթոդական աշխատանքը կազմակերպելիս: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայայացնելու տեքստային խնդիրների լուծման փուլերը:<br>2. Բնութագրելու տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացում ուսուցանվող խնդիրների հիմնական տեսակները:<br>3. Նկարագրելու և մեկնաբանելու տարբեր տեսակի տեքստային խնդիրների մոդելավորման և լուծման մեթոդական հնարները:<br>4. Բացատրելու և հիմնավորելու տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի խնդիրների | | |

հիմնական տեսակների ուսուցման հաջորդականության տրամաբանությունը:
5. Ներկայացնելու և բացատրելու համեմատական մեծություններին վերաբերող տեքստային խնդիրների լուծման մեթոդական հնարները:
6. Ներկայացնելու և բացատրելու շարժվող օբյեկտներին վերաբերող խնդիրները լուծելու ուսուցողական մեթոդները:
7. Ներկայացնելու և մեկնաբանելու հակադարձ և անուղղակի ձևով ձևակերպված խնդիրների ուսուցման առանձնահատկությունները:
8. Բնութագրելու կրտսեր դպրոցականի մտավոր զարգացման տարիքային առանձնահատկությունները և ներկայացնելու նախատեսված նյութի ուսուցման արդյունավետ մեթոդներն ու հնարները:
9. Ներկայացնելու և հիմնավորելու համապատասխան դիդակտիկ և զննական պարագաների արդյունավետ կիրառման պահանջները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Տարբեր եղանակներով վերլուծելու պարզ և բաղադրյալ խնդիրները, նրանց համապատասխան կառուցելու տարբեր տեսակի մոդելներ:
2. Կազմակերպելու աշակերտների ուսումնական գործունեությունը:
3. Գիտամեթոդական բարձր մակարդակով մեկնաբանելու յուրաքանչյուր տեսակի տեքստային խնդրի լուծման ալգորիթմները:
4. Ընտրելու ուսուցվող նյութին համապատասխան ուսուցման կազմակերպման ձևը (արտադասարանական աշխատանքներ), դիդակտիկ խաղերը և կիրառելու դրանք:
5. Գործնականում մոդելավորելու տարրական դպրոցում ուսուցանվող տեքստային խնդիրները և կիրառելու դրանց վերլուծության եղանակները:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Կիրառելու միջառարկայական կապերը դասավանդման ժամանակ:
2. Տալու ինքնուրույն աշխատանքին վերաբերող հատուկ ցուցումներ:
3. Մասնագիտական միջավայրում ներկայացնելու և կիրառելու տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացում ուսուցանվող հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժությունների լուծման ձևերը և մեթոդները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական զիտափորձ:
5. հետազոտական աշխատանք /մասնագիտական գրականության վերաբերյալ/:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ*** ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:

***2-րդ ստուգում.*** Կատարած հետազոտական աշխատանքի գնահատում: Տե՛ս «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ը:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Տեքստային խնդիրների ուսումնասիրության և լուծել ուսուցանելու մեթոդիկայի ընդհանուր հարցեր: **Թեմա 2.** Բաղադրյալ խնդիրների ուսումնասիրության և լուծել ուսուցանելու մեթոդիկան: **Թեմա 3.** Շարժմանը վերաբերող խնդիրների ուսումնասիրության և լուծել ուսուցանելու մեթոդիկան: **Թեմա 4.**

| |
|---|
| Տեքստային խնդիրների ուսումնասիրության և լուծել ուսուցանելու մեթոդիկայի գործնական իրագործումներ: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:<br>2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:<br>3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:<br>4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.<br>5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.<br>6. Тихоненнко А.В. и др., Теоретические и методические основы изучения математики в начальной школе.-Ростов н/Д: Феникс, 2008.-349с.<br>7. Белошистая А. В., Методика обучения математике в начальной школе. Курс лекций. -М.: 2007 - 455 с.<br>8. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ): |

| | | |
|---|---|---|
| **1.0105/B51** | **2.Ես և շրջակա աշխարհը** | **3.5 կրեդիտ** |
| **4.5 ժամ/շաբ.** | **5.30/45/0** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

| |
|---|
| **8.Դասընթացի նպատակն է՝** ծանոթացնել ուսանողներին սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. հասկանալ ներառական դպրոցներում դասավանդվող առարկայի ծրագիրը, ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, դրա դասավանդման մեթոդները,<br>2. բացատրել առարկայի դասավանդման շտկողական-դաստիարակչական և մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական / ներառական / դպրոցում: |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դերը կրտսեր դպրոցականի և հատկապես կրթական հատուկ կարիքներով երեխաների կրթադաստիարակչական և շտկող զարգացնող աշխատանքներում:<br>2. Կառուցելու և հաշվի առնելով ներառական դպրոցի առանձնահատկությունները՝ իրականացնելու դաս, լաբորատոր պարապմունքներ, էքսկուրսիաներ բնության գրկում, թանգարաններում և ցուցահանդեսներում, այգիներում:<br>3. Առանձնացնելու «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դասավանդման մեթոդներն ու հնարները:<br>4. Ներկայացնելու ներառական կրթության հիմնական սկզբունքները, նպատակներն ու խնդիրները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Սովորեցնելու աշակերտներին ճիշտ հաղորդակցվելու ընկերների և մեծերի հետ, նրանց մոտ ձևավորելու իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ:<br>2. Դրսևորելու արտադասարանական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու հմտություններ:<br>3. Աաշակերտների մոտ ձևավորելու և զարգացնելու ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտություններ, ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Արդյունավետ հաղորդակցվելու և համագործակցելու մարդկանց հետ:<br>2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:<br>3. Արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և |

հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,
**Ա7.**մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:
**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
**Գ4.**գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները:

11.**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. դիտում
2. զրույց
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն
4. մանկավարժամեթոդական զիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**
Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:
*1-ին ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
*2-րդ ստուգում.* Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**
**Թեմա 1.** Բնությունը և հասարակությունը որպես շրջապատող աշխարհի բաղկացուցիչ մասեր: **Թեմա 2.** Մարդը որպես բնության և հասարակության անդամ: **Թեմա 3.** Շրջապատող աշխարհը ճանաչելու եղանակները, դպրոցականի օրվա ռեժիմը, անձնական հիգիենան, ֆիզիկական կուլտուրա, առաջին բուժօգնություն: **Թեմա 4.** Կենդանի և անկենդան բնություն, տարվա եղանակները և դրանց միջև կապը: **Թեմա 5.** Մթնոլորտ, ջրոլորտ: **Թեմա 6.** Մակերևույթի ձևերը, օգտակար հանածոներ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Տիգրան մեծ, Երևան, 2004:
2. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Այոէքս, Երևան, 2004:
3. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2005:
4. Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2006:
5. Ինտեգրված թեմատիկ միավորներ, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման համար, Երևան, 2003.
6. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Այլընտրանքային մեկնաբանություն, Այոէքս, Երևան, 2004:


| | | |
|---|---|---|
| **1.0302/B52** | **2.Մանկական գրականություն** | **3.5կրեդիտ** |
| **4.5 ժամ/շաբ.** | **5.45/0/30** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին գիտելիքներ հաղորդել գրականագիտական հիմնական հասկացությունների, գրական ուղղությունների, մեթոդների, սեռերի ու ժանրերի, արձակի և չափածոյի առանձնահատկությունների վերաբերյալ: Ներկայացվում են մանկական բանահյուսությունը, հայ նոր և նորագույն շրջանի մանկական գրականությունը, մանկական պարբերականները, արկածային, գիտահանրամատչելի, ֆանտաստիկ գրական ժանրերը, ռուս և համաշխարհային թարգմանական մանկական գրականությունը:
**Դասընթացի խնդիրները.**
1. ուսումնասիրել մանկագրության հետ առնչվող բանահյուսական ժանրերը,
2. ուսումնասիրել մանկական գրականությունը,
3. ծանոթանալ ճանաչված մանկագիրների գործերին,

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*
1. Մատնանշելու հայ մանկագրության առանձնահատկություններն ու տարբերակելու զարգացման

փուլերը:
2. Թվարկելու և արժևորելու նշանավոր մանկագիրներին և նրանց ստեղծագործությունները:
3. Տարբերակելու գրական ժանրերի մանկական երկերը, ներկայացնելու հայ մանկագրության գեղարվեստական արժեքները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կատարելու ցանկացած մանկական ստեղծագործության գրականագիտական վերլուծություն:
2. Մեկնաբանելու մանկական գրականության ժանրային առանձնահատկությունները:
3. Կարևորելու մանկական գրականության դերը մանուկ սերնդի գաղափարական դաստիարակության գործում:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Ա6.**նկարագրել հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական աշխատանք
2. խմբային աշխատանք
3. շրջագայություն պատկերասրահում
4. ակրոստիքոս
5. խմբավորում
6. քարտեզագրում:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** 19-րդ դարի հայ մանկագրությունը: Աբովյանի, Թումանյանի, Աղայանի, Խնկոյանի մանկական ստեղծագործությունները: **Թեմա 2.** Նորագույն շրջանի հայ մանկական գրականության առանձնահատկություններն ու զարգացման միտումները: Հայ մանկագրությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: **Թեմա 3.** Նորագույն շրջանի մանկական պոեզիան. Սևակ, Կապուտիկյան, Սահյան, Դավթյան, Էմին: **Թեմա 4.** Ժամանակակից մանկական գրականությունը. Ս.Մուրադյան, Պ.Խաչատրյան, Է.Միլիտոնյան, Լ.Սարգսյան, Ե.Պետրոսյան, Յու.Սահակյան: **Թեմա 5.** Թարգմանական մանկական գրականության առանձնահատկությունները: Ռուս մանկագրությունը. Պուշկին, Կռիլով, Լերմոնտով, Մարշակ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Բախչինյան Հ., Սարինյան Ս., Հայ գրականություն 10,Ե., 2009:
2. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Ե., 2006:
3. Կիրակոսյան Վ., Ավետիսյան Զ., Գրականություն 11, Ե., 2010:


| | | |
|---|---|---|
| **1.0303/B53** | **2.Ներառական կրթություն** | **3.4 կրեդիտ** |
| **4.4ժամ/շաբ** | **5.18/18/0** | |
| **6.7-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողների մոտ դաստիարակել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, դաստիարակության ռազմավարական ուղղությունների գիտակցում, աջակցել ներառման սկզբունքների և քաղաքականության մասին գիտելիքների յուրացմանը:

**Դասընթացի խնդիրները.**

1. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հավասար իրավունքներին,
2. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից

օգտվելու հիմնախնդիրներին՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
3. ծանոթացնել երեխայի համակողմանի բնականոն զարգացմանը, նրա կրթության կազմակերպմանը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացմանը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու ներառական կրթության կազմակերպման սկզբունքները, քաղաքականության հիմնական ուղղությունները:
2. Բացատրելու դպրոցի առաքելությունը և բոլոր երեխաներին կրթության մեջ ներառելու քաղաքականության իրագործման հոգեբանամանկավարժական սկզբունքները, մեկնաբանելու դրա իրավական և բարոյաէթիկական հիմնավորումը:
3. Ներկայացնելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, հնարները և միջոցները:
4. Բացատրելու և հիմնավորելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման գործում դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության կարևորությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ուսումնասիրելու և վեր հանելու կրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում առկա խնդիրները, դժվարությունները և շեղումները, իրականացնելու նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացները:
2. Կոնկրետ իրավիճակներում առանձնացնելու երեխաների բարոյական, գեղագիտական և գաղափարական դաստիակության խնդիրները և առաջարկելու դրանց լուծման ճանապարհներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Ա4.**մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ4.**վերլուծել և գնահատել սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով,

**Գ1.**իրականացնել մասնագիտական գործունեություն,

**Գ4.**գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. գործնական աշխատանքներ
3. քարտեզագրում
4. քառաբաժան
5. մտագրոհ
6. պրիզմա
7. խորանարդում
8. շրջագայություն պատկերասրահում
9. հնգյակ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

*1-ին ստուգում.* Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
*2-րդ ստուգում.* Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից**.

**Թեմա 1.** Ներառման քաղաքականությունը և սկզբունքները: **Թեմա 2.** Երեխաների ներառումը կրթության մեջ: **Թեմա 3.** ՀՀ օրենսդրությունը ներառման քաղաքականության մասին: **Թեմա 4.** Ներառման քաղաքականության իրագործումը Հայաստանում: **Թեմա 5.** Ներառման քաղաքականության շարունակականության ապահովումը ՀՀ կրթական համակարգում: **Թեմա 6.** Ներառական կրթության ազգային ռազմավարական ծրագրի մշակումը որպես հատուկ և հանրակրթական համակարգի միասնական գործառության ապահովման իրավական հիմք: **Թեմա 7.** Ներառման քաղաքականության իրականացման մշտադիտարկումը: **Թեմա 8.** Ներառական կրթության կազմակերպումը: **Թեմա 9.** Ներառական կրթությունը որպես մանկավարժական հիմնախնդիր: **Թեմա 10.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման սկզբունքները: **Թեմա 11.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման մեթոդներն ու կազմակերպման ձևերը: **Թեմա 12.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաները: **Թեմա 13.** Դաստիարակության գործընթացի կազմակերպումը ներառական կրթության պայմաններում: **Թեմա 14.** Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում: **Թեմա 15.** Ուսուցչի շարունակական մանկավարժական կատարելագործումը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման միջոց, ներառական կրթության որակի կառավարումը:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծությունն, Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, 2012 թ.
2. Հանրային կարծիքի հետազոտության վերլուծություն հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության վերաբերյալ: Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, Երևան, 2012թ.
3. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ.Ջեկույց որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր և «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրման ծրագիր», Երևան, 2013թ.
4. «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատումե հետազոտությունը: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ.
5. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ձեռնարկ: Նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր, Երևան, 2013թ.


| **1.0303/B54** | **2.Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -4** | **3.5 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.4 ժամ/շաբ.** | **5.18/18/0** | |
| **6.7-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել կրտսեր դպրոցականի գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկություններին, նրանց զինել խոսքի զարգացման կարողություններով:

<u>**Դասընթացի խնդիրները.**</u>

1. Դիտարկել 1-4-րդ դասարանների մայրենիի ծրագիրը կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի զարգացման տեսանկյունից:
2. Ուսումնասիրել տարրական դպրոցում կիրառվող գրավորի տեսակները և այդ ուղղությամբ աշակերտների կարողությունների ձևավորման մեթոդիկան:
3. Մշակել գրավորի դասեր վարելու կարողություններ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Տարբերակելու տարրական դպրոցում կիրառվող գրավորի տեսակները:
2. Մշակելու գրավորի տարբեր տեսակների դասեր վարելու պլաններ, դիտարկելու նրանց արդյունքները:
3. Բացահայտելու և դասակարգելու գրավոր խոսքում սովորողների թույլ տված սխալները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

| |
|---|
| 1. Մշակելու և կիրառելու սովորողների ուղղագրական սխալները կանխելուն և շտկելուն միտված վարժությունների համակարգ:<br>2. Կիրառելու ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքները և ունակությունները, պրակտիկ գործունեության մեջ:<br>3. Կիրառելու ուղղագրական կարողությունների ձևավորմանը միտված հետաքրքրաշարժ փոխգործուն մեթոդներ:<br>*գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ*<br>*1.* Կատարելու լեզվական հետազոտություններ:<br>2. Հաստատելու միջառարկայական կապեր:<br>3. Հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը: |
| **10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,<br>**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,<br>**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,<br>**Բ6**. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:<br>**Գ2.**գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,<br>**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. ակտիվ դասախոսություն<br>2. փոխգործուն մեթոդներ<br>3. համագործակցային աշխատանք<br>4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում<br>5. էսսեների կիրառում: |
| ***12.Գնահատման մեթոդները***<br>Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 3, 3, 4 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:<br>***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:<br>***2-րդ ստուգում.*** Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է: |
| **13.Դասընթացի համառոտ բովանդակությունը**<br>**Թեմա 1**. Խոսքի տեսակները, նրանց ներկայացվող պահանջները: **Թեմա 2**. Կապակցված խոսքի զարգացման մեթոդները: **Թեմա 3**. Գրավոր խոսքի տեսակները, նրանց ուսուցման մեթոդիկան: **Թեմա 4.** Կրտսեր դպրոցականի կարողությունների ձևավորման մեթոդիկան: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:<br>2. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:<br>3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի- 2» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե., Լույս, 2004:<br>4. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Երևան, Էդիթ պրինտ, 2017:<br>5. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2017: |

| | | |
|---|---|---|
| **1.0303/B55** | **2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-4** | **3.5 կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.18/18/0** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն | | |

մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

<u>**Դասընթացի խնդիրները.**</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու տարրական դպրոցում մեծության մասի և կոտորակների ուսուցման դժվարությունները, բացատրելու կոտորակների համեմատման և նրանց հետ թվաբանական գործողությունների կատարման սխեմաները, նկարագրելու դրանց արդյունավետ ուսուցման մեթոդները:
2. Ներկայացնելու մաթեմատիկայի տարրական դասընթացում երկրաչափական հիմնական հասկացությունների տրման և նրանց մեկնաբանման առանձնահատկությունները և ուսուցման մեթոդները:
3. Ներկայացնելու մաթեմատիկայի տարրական դասընթացում հանրահաշվական հիմնական հասկացությունների տրման և նրանց մեկնաբանման առանձնահատկությունները և ուսուցման մեթոդները:
4. Նկարագրելու և տարանջատելու ըստ ուսուցման տարիների աշակերտների գիտելիքներին ներկայացվող պահանջները:
5. Բնութագրելու կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման առանձնահատկությունները և մտածողական հնարների զարգացման պայմանները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Կազմակերպելու աշակերտների ուսումնական գործունեությունը ուսուցման տարբեր ձևերի կիրառմամբ:
2. Կիրառելու միջառարկայական կապերը ուսուցման ժամանակ, ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:
3. Ուսուցման գործընթացում կիրառելու ակնառուական բացատրություններ, ցուցումներ և գործնական աշխատանքներ (տեսազննական պարագաների պատրաստում):
4. Կազմելու կրտսեր դպրոցականների մտավոր գործունեությունը խթանող առաջադրանքներ և քննարկելու դրանք:
5. Տալու ինքնուրույն աշխատանքին վերաբերող հատուկ ցուցումներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Մասնագիտական միջավայրում անկաշկանդ կիրառելու մաթեմատիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժությունների լուծման ձևերը և մեթոդները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
**Ստուգման ձևերն են.**
*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:
*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**
**Բաժին 1. «Մաս», «Կոտորակ» հասկացությունների ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան**:
**Թեմա 1.** Մեծության մասի հետ ծանոթացման մեթոդիկան: **Թեմա 2.** Կոտորակների ուսուցման մեթոդիկան: **Թեմա 3.** Մեծության տրված մասը և տրված մասով մեծությունը գտնելուն վերաբերող հարցի ուսուցման մեթոդիկան:
**Բաժին 2. Երկրաչափական նյութի ուսուցման մեթոդիկան:**
**Թեմա 1.** Տարրական դպրոցում երկրաչափական նյութի ուսուցման հիմնական նպատակները և խնդիրները: **Թեմա 2.** Երկրաչափական հասկացությունների ներմուծման և հիմնական փաստերի շարադրման առանձնահատկությունները տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացում: **Թեմա 3.** Կրտսեր դպրոցականին «Կետ», «Ուղիղ(գիծ)», «Կոր (գիծ)», «Հատված», «Անկյուն», «Բազմանկյուն», «Շրջան» («Շրջանագիծ»), «Բեկյալ», «Բեկյալի երկարություն», «Բազմանկյան պարագիծ», «Մակերես», «Համաչափություն» հասկացության հետ ծանոթացնելու և ուսուցանելու մեթոդիկան:
**Բաժին 3. Հանրահաշվական նյութի ուսուցման մեթոդիկան:**
Թեմա 1. Տարրական դպրոցում հանրահաշվի տարրերի ուսուցման ընդհանուր հարցեր. ուսուցման նպատակները և խնդիրները: Թեմա 2. Թվային արտահայտությունների, հավասարությունների և անհավասարությունների ուսուցման մեթոդիկան: Թեմա 3. Թվաբանական գործողությունների արդյունքի փոփոխությունը՝ կապված բաղադրիչների փոփոխությունից:
**Բաժին 3. ՏԴՄՈՒՄ դասընթացի տեսական հիմունքները:**
**Բաժին 4. Մաթեմատիկական մտահանգումները տարրական դպրոցի մաթեմատիկա դասընթացում:**

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):


| | | |
|---|---|---|
| **1.0105/B56** | **2.Երկրաչափության հիմունքներ** | **3.4 կրեդիտ** |
| **4.4 ժամ/շաբ.** | **5.18/18/0** | |
| **6.7-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:
**<u>Դասընթացի խնդիրները.</u>**
1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***
1. Նկարագրելու, սահմանելու և մեկնաբանելու տարրական դպրոցի եմաթեմատիկայի դասընթացում հանդիպող երկրաչափության հիմնական հասկացությունները և մեծությունները:
2. Ձևակերպելու և մեկնաբանելու Էվկլիդեսյան երկրաչափության և մեծությունների հիմնական հասկացությունները:
3. Հստակ ձևակերպելու աքսիոմներն ու թեորեմները և մեկնաբանելու դրանք:
1. Բացատրելու և հիմնավորելու տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում երկրաչափութան ուսուցման նպատակահարմարությունը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

| |
|---|
| 1. Տարբերելու պարզագույն երկրաչափական պատկերները, գծագրելու դրանք, կատարելու նրանց նշանակումները և ճիշտ կարդալու:<br>2. Կիրառելու պարզագույն երկրաչափական պատկերների հատկություններն ու հայտանիշները նրանց վերաբերյալ խնդիրները լուծելիս:<br>**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**<br>**1.** Կիրառելու երկրաչափական հնարները տարրական դպրոցում:<br>2. Գործնականում կիրառելու երկրաչափական հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժությունների լուծման ձևերն ու մեթոդները: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,<br>**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,<br>**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,<br>**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դիտում,<br>2. զրույց,<br>3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,<br>4. մանկավարժամեթոդական զիտափորձ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:<br>***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Երկրաչափության դասընթացի կառուցվածքը: **Թեմա 2.** Պարզագույն երկրաչափական պատկերներ: **Թեմա 3.** Բազմանկյուններ և բազմանիստեր: **Թեմա 4.** Պատկերների ձևափոխություններ: **Թեմա 5.** Փոփոխական և հաստատուն մեծություններ: **Թեմա 6.** Մոդուլի ելքեր - փոխանցումներ տղմում դասընթաց: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:<br>2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:<br>3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:<br>4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.<br>5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.<br>6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ): |

Կամընտրական դասընթացներ

| | | |
|---|---|---|
| **1.0303/B57** | **2.Գործնական հոգեբանություն** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել գործնական հոգեբանության բովանդակությանը, խնդիրներին, կիրառական նշանակություններին ու մեթոդներին:<br>**Դասընթացի խնդիրները.** | | |

1. Գործնական հոգեբանության գիտելիքների ձևավորում, առարկայի նպատակի, խնդիրների մեկնաբանում
2. Գործնականում հոգեբանական իրադրությունների, խնդիրների հետ աշխատելու կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորում ու զարգացում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու դասընթացի խնդիրները, ուսումնասիրության առարկան:
2. Ներկայացնելու գործնական հոգեբանության տեսագործնական ու մեթոդաբանական հիմքերը:
3. Բնութագրելու գործնական հոգեբանության մեթոդների ու տեխնիկաների կիրառական նշանակությունը մանկավարժահոգեբանական իրադրություններում:
4. Ներկայացնելու դպրոցում և ընդհանրապես մանկավարժական պրակտիկայում գործնական հոգեբանության գիտելիքների, հմտությունների և կարողությունների կիրառական նշանակությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ուսումնասիրելու գործնական հոգեբանության տեսամեթոդաբանական հիմքերը և վերլուծելու դրանք:
2. Վերլուծելու և պարզաբանելու գործնական հոգեբանության կիրառական մեթոդաբանական համակարգը:
3. Կատարելու հետազոտական և գործնական աշխատանքներ հոգեբանական որոշակի խնդրային իրադրությունների կարգավորման նպատակով:
4. Պրակտիկայում կիրառելու պրակտիկ հոգեբանության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ:
2. Կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Բ5.**մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

**Գ6.**կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Գործնական հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2**. Գործնական հոգեբանության կիրառական մեթոդներն ու տեխնոլոգիաները: **Թեմա 3.** Հոգեախտորոշիչ աշխատանքը կրթության բնագավառում: **Թեմա 4.** Հոգեբանական պրակտիկ աշխատանքը դպրոցում: **Թեմա 5.** Հոգեշտկողական և թերապևտիկ աշխատանքը կրթության ոլորտում: **Թեմա 6**. Հոգեբանական աշխատանքը կրթության ոլորտի մասնագետների հետ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Абрамова Г.С. Практикум по психологическому консультированию. 1995.
2. Гулина М.А. Терапевтическая и консультативная психология. 2001.
3. Немов Р.С. Психологическое консультирование. М.: 2003.
4. Кочюнас Р. Психологическое консультирование и групповая психотерапия. М. 2005.
5. Линде Н.Д. Психологическое консультирование. М.: 2009.
6. Абрамова Г.С. Практикум по психологическому консультированию. 1995.
7. Бондаренко А.Ф. Психологическая помощь: теория и практика, М.: 2000.

8. Малкина-Пых И.Г. Справочник практического психолога. М.: 2008.
9. Осипова А.А. Общая психокоррекция. М.: 2000.
10. Потапова А.В. Психологическая служба. часть 1. М.: 2001.


| | | |
|---|---|---|
| **1.0303/B57** | **2.Գործնական մանկավարժություն** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.15/30/0** | |
| **6.5-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական գիտելիքները, մանկավարժական պրակտիկ կարողությունների և հմտությունների շրջանակը, նպաստել ուսանողների մասնագիտական կոմպետենտության ձևավորմանը:

**<u>Դասընթացի խնդիրները.</u>**

1. ճանաչել ներառական դպրոցներում դասավանդվող առարկայի ծրագիրը, ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, դրա դասավանդման մեթոդները,
2. բացատրել առարկայի դասավանդման շտկողական-դաստիարակչական և մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական / ներառական / դպրոցում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Նկարագրելու գործնական մանկավարժություն առարկան, ներկայացնելու նրա նպատակը, խնդիրները և առարկայի տեղն ու դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ:
2. Թվարկելու գործնական մանկավարժության հետազոտման մեթոդները և բացատրելու նրանց առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու և մեկնաբանելու ուսուցչի գործունեության ոլորտները, թվարկելու դասղեկի պարտականությունները:
4. Բացատրել հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունավետության պայմանները:
5. Ներկայացնելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, մանկավարժական ղեկավարման ոճերը, առանձնացնելու և բնութագրելու մանկավարժի կողմից ուսումնառողներին ճանաչելու միջոցներն ու մեթոդները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Պլանավորելու և իրականացնելու մանկավարժական գործունեություն, կատարելու մանկավարժական ախտորոշում և կանխատեսում:
2. Գործնականում ապահովելու տեսության և պրակտիկայի կապը, կատարելու մանկավարժական գործունեության նախագծում և մոդելավորում:
3. Կազմելու թեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային և այլ պլաններ:
4. Կրթական գործընթացում կիրառելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Խնդրահարույց իրավիճակներում լուծելու առաջացած մանկավարժական խնդիրները:
2. Մասնագիտորեն ճիշտ հաղորդակցվելու մանկավարժական միջավայրում, համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:
3. Դրսևորելու և զարգացնելու անձնային համապատասխան մասնագիտական որակներ և գործիմացություն:
4. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

**Ա5.**ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

**Ա6.**նկարագրել հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները.

**Ա7.**մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն,

| |
|---|
| **Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դիտում<br>2. զրույց<br>3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն<br>4. մանկավարժամեթոդական գիտափորձ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Պրակտիկ մանկավարժական գործունեության մեթոդաբանությունը և տրամաբանությունը: Մանկավարժության տեսության և պրակտիկայի փոխադարձ կապը: **Թեմա 2.** Մանկավարժական խնդիրների լուծման տեխնոլոգիաները: Մանկավարժական խնդիրների լուծման ընտրության գնահատումը: **Թեմա 3**. Մանկավարժի արժեքաիմաստային ինքնորոշումը մանկավարժական գործընթացում: **Թեմա 4**. Մանկավարժական նախագծում: Մանկավարժական գործընթացի նախագծումը տարիքային համապատասխանությամբ: **Թեմա 5.** Մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխազդեցության տարբեր ձևերը: Մանկավարժի անահատական և կոլեկտիվ ստեղծագործումը: **Թեմա 6.** Մանկավարժի դիրքորոշումը նորարարական գործընթացներում: **Թեմա 7**. Սովորողների նվաճումների գնահատման տեխնոլոգիաները տարիքային համապատասխանությամբ: **Թեմա 8**. Մանկավարժական գործընթացի առողջապահական տեխնոլոգիաները: **Թեմա 9.** Մանկավարժական գործընթացի տեղեկատվական-տեխնոլոգիական ուղեկցումը: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ս.Մանուկյան, Մանկավարժական և աշակերտական դասանպատակներ: Եր.,«Լուսաբաց», 2003, 188էջ:<br>2. Ս.Մանուկյան, Մտավոր գործունեության ձևերը կրթության բովանդակության կազմում: Եր., «Զանգակ-97», 2000, 80 էջ:<br>3. Ս.Մանուկյան, Մանկավարժագիտություն: Եր., «Զանգակ-97», 2002, 512 էջ:<br>4. А.Кузенцов, Принципы активной педагогики. -М.; Академия, 2001, 120 с. |

**Կամընտրական դասընթացներ**

| | | |
|---|---|---|
| **1.0303/B58** | **2.Հատուկ հոգեբանության հիմունքներ** | **3.3 կրեդիտ** |
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝** Ուսանողներին զինել գիտելիքներով անձի զարգացման մեջ տեղ գտած շեղումների մեխանիզմների և օրինաչափությունների, դինամիկայի, հոգեբանական առանձնահատկությունների մասին: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*<br>1. Նկարագրելու անձի հոգեբանական զարգացման խանգարումների ախտորոշման տեսական և կիրառական մոտեցումները:<br>2. Մեկնաբանելու անձի հոգեբանական զարգացման խանգարումների դասակարգումները:<br>3. Նկարագրելու անձի հոգեբանական զարգացման առանձնահատուկ դիզոնտոգենեզով երեխաների հոգեբանական բնութագիրը:<br>4. Մեկնաբանելու հաշմանդամություն ունեցող անձանց հոգեբանական ռեաբիլիտացիայի առանձնահատկությունները:<br>*ործնական մասնագիտական կարողություններ*<br>1. Կիրառելու տեսական մասնագիտական գիտելիքները զարգացման խնդիրներով անձանց հետ աշխատանքի ընթացքում:<br>2. Որոշելու զարգացման խանգարումների հոգեբանական կառուցվածքը՝ կիրառելով հատուկ հոգեբանական ախտորոշման մեթոդներ:<br>3. Իրականացնելու հոգեբանական հետազոտություններ՝ խախտված հոգեֆիզիկական զարգացման բնութագրման նպատակով:<br>4. Որոշելու հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություններով երեխաների սոցիալիզացիայի պայմաններն ու չափանիշները:<br>*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*<br>1. Վերլուծելու անձի ախտորոշման արդյունքները:<br>2. Կազմակերպելու հոգեֆիզիկական զարգացման խնդիրներով անձանց հետազոտում՝ կիրառելով | | |

| |
|---|
| համապատասխան տեխնոլոգիաները, մեթոդներն ու միջոցները:<br>3. Գնահատելու անձի հոգեֆիզիկական վիճակը՝ կիրառելով հոգեշտկողական ներգործության մեթոդները և միջոցները:<br>4. Կազմակերպելու հոգեֆիզիկական զարգացման շեղումներով երեխաների բազմակողմանի ֆիզիկական և հոգեկան զարգացումը և գնահատելու այդ աշխատանքների արդյունքները: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները**.<br>**Ա2**.բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,<br>**Բ2**.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,<br>**Բ3**.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,<br>**Գ1**. իրականացնել մասնագիտական գործունեություն,<br>**Գ3**.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,<br>**Գ5**.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. ինտերակտիվ քննարկում<br>3. ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:<br>***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Հատուկ հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները, միջառարկայական կապերը: **Թեմա 2.** Հոգեկան զարգացման հապաղումների դասակարգումը: **Թեմա 3.** Փոխհատուցումը, ադապտացիան, շտկումը և ռեաբիլիտացիան՝ որպես ժամանակակից հատուկ հոգեբանության ֆունդամենտալ կատեգորիաներ: **Թեմա 4.** Մտավոր հետամնացություն: **Թեմա 5.** Լսողության խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 6.** Տեսողության խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 7.** Հոգեկան զարգացման հապաղումով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 8.** Խոսքի խանգարումներով երեխաների հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 9.** Հուզակամային ոլորտի և վարքի խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 10.** Հոգեբանական շտկման բովանդակությունն ու ուղղությունները հատուկ կրթության համատեքստում: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>**1.** Сорокин В. М.Специальная психология: Учеб. пособие / Под научн. ред. Л. М. Шипицыной. — СПб.: «Речь». 2003. — 216 с.<br>**2.** Специальная психология: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В. И. Лубовский, Т. В. Розанова, Л. И. Солнцева и др.; Под ред. В. И. Лубовского. – 2-е изд., испр. – М.: Изд. центр «Академия», 2005. – 464 с.<br>**3.** Шаповал И.А. Специальная психология: Учебное пособие. — М.: ТЦ Сфера, 2005. — 224 с.<br>**4.** Трофимова Н. М., Дуванова С. П., Трофимова Н. Б., Пушкина Т. Ф. Основы специальой педагогики и психологии. — СПб.: Питер, 2005. — 304 с.<br>**5.** Основы специальной психологии: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений/ Л.В.Кузнецова, Л.И.Переслени, Л.И.Соднцева и др.; под ред. Л.В.Кузнецовой.- 2-ое изд. стер.-М.: Изд.центр «Академия», 2005. – 480 с. |

| **1.0303/B58** | **2.Հատուկ մանկավարժության հիմունքներ** | **3.3 կրեդիտ** |
|---|---|---|
| **4.3 ժամ/շաբ.** | **5.30/0/15** | |
| **6.6-րդ կիսամյակ** | **7.Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին ծանոթացնել մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, նրանց կրթության և դաստիարակության օրինաչափությունների և մեթոդների մասին: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝** | | |

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ուսանողների մոտ ձևավորելու խնդրով երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման օրինաչափությունների մասին գիտելիքներ:
2. Մեկնաբանելու խնդրի բնույթը, շտկման և փոխհատուցման հնարավորությունները և ուղիները:
3. Մշակելու խնդրով երեխաների ուսուցման և դաստիարակության մանկավարժական սկզբունքները:
4. Ներկայացնելու խնդրով երեխաների դաստիարակության նպատակները, բովանդակությունը, մշակելու նրանց հետ աշխատելու մեթոդներ և ձևեր:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Զարգացնելու երեխաների գործունեությունը սոցիալական միջավայրում:
2. Կիրառելու հատուկ ուսուցման սկզբունքները:
3. Ուսումնասիրելու և ընդհանրացնելու հատուկ ուսուցման առաջավոր փորձը:
4. Մշակելու աշխատանքային և մասնագիտական պատրաստության համակարգը, որն անհրաժեշտ է նրանց սոցիալական հարմարեցման և ներառման համար:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Բացահայտելու և հաղթահարելու երեխայի անհատական զարգացման խնդիրները, շտկելու նրանց գործունեության ու վարքի ֆունկցիոնալ խանգարումները:
2. Գնահատելու խնդրով երեխաների ընթացիկ վիճակը՝ մանկավարժական շտկողական ներգործության մեթոդներով և միջոցներով:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա2.**բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

**Բ1.**պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

**Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

**Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

**Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն,

**Գ3.**պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. ինտերակտիվ քննարկում
3. ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված *2 ընթացիկ ստուգումներից* յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

*1-ին ստուգում.* Գրավոր /ստուգողական աշխատանք/:

*2-րդ ստուգում.* Բանավոր հարցում:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Հատուկ մանկավարժության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Հատուկ կրթության հիմնախնդիրները, տեխնոլոգիաներն ու մեթոդները: **Թեմա 3.** Հատուկ կարիքով երեխաների սոցիալ-մանկավարժական օգնությունը: **Թեմա 4.** Հատուկ մանկավարժության խնդիրները մտավոր հետամնացության դեպքում: **Թեմա 5.** Խոսքի խանգարումներ: Աշխատանքը խոսքի խանգարումների դեպքում: **Թեմա 6.** Տեսողության խանգարումներ: Աշխատանքը տեսողության խանգարումների դեպքում: **Թեմա 7.** Լսողության խանգարումներ: Աշխատանքը լսողության խանգարումների դեպքում: **Թեմա 8.** Մանկական աուտիզմ **Թեմա 9.** Հենաշարժողական համակարգի խանգարումներ: Հատուկ մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Մանկական ուղեղային կաթված:

| **14.Հիմնական գրականության ցանկ.** |
| --- |
| 1. Специальная педагогика /Под редакцией Н.М. НАЗАРОВОЙ. — Москва: 2000.<br>2. Аксенова Л.И., Архипов Б.А., Белякова Л.И. и др. - Специальная педагогика: Учебное пособие для студентов педагогических вузов. - 2001.<br>3. Басова А.Г., Егоров С.Ф., История сурдопедагогики. - М., 1984.<br>4. Дефектологический словарь / Гл. рел. А.И.дьячков и др. — М., 1970.<br>5. Замский Х.С., Умственно отсталые дети: история их изучения, воспитания и обучения с древних времен до середины XX века. — М., 1995.<br>6. Назарова П.М., Развитие теории и практики дефектологического образования. Сурдопедагог: история, современные проблемы, перспективы профессиональной подготовки. — М., 1992.<br>7. Обучение детей с проблемами в развитии в разных странах мира: Хрестоматия / Сост. Л.М. Щипицина. —СП6., 1997.<br>8. Рейсвейк К. Специальное образование в Нидерландах. — 1993.<br>9. Уорд АЛ. Новый взгляд. Задержка в психическом развитии: правовое регулирование. — Тарту, 1995.<br>10. Феоктистова В.А. Очерки истории зарубежной тифлопедагогики и практики обучения слепых и слабовидящих детей. — Л., 1973.<br>11. Хрестоматия по истории тифлопедагогики / Сост. В.А.Феоктистова. — М., 1987. |

Կամընտրական դասընթացներ

| **1.0303/B59** | **2.Առաջին բուժօգնություն և երեխայի առողջապահության պահպանման հիմունքներ** | **3.2կրեդիտ** |
| --- | --- | --- |
| **4.2ժամ/շաբ.** | **5.9/9/0** | |
| **6.7-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |
| **8.Դասընթացի նպատակն է՝** Ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժվածներին զրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:<br>**<u>Դասընթացի խնդիրները.</u>**<br>1. զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններնաղետների տուժածներին առաջին օգնություն ցույց տալու,նվիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար,<br>2. պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակներին պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ: | | |
| **9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու բժշկա-հիգիենիկ դաստիրակության կանոնները:<br>2. Թվարկելու երեխայի առողջության պահպանման մեխանիզմները, բնութագրելու դրանց առանձնահատկությունները:<br>3. Թվարկելու տարբեր վտանգավոր իրավիճակներում տուժածի քննության և առաջին բուժօգնության ձևերը:<br>4. Թվարկելու երեխաների տարբեր տարիքային խմբերի համար ռիսակյին հանդիսացող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները և ներկայացնելու դրանց դեմ պայքարելու ձևերը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Ցուցադրելու և կիրառելու հիգիենայի պահպանման կանոնները պրակտիկ աշխատանքում:<br>2. Ցուցադրել առաջին բուժօգնության հնարները (վիրակապում, բեկակալի տեղադրում, ջերմաչափում, պուլսի որոշում) գործնական ստեղծած իրավիճակներում:<br>3. Համապատասխան վայրերում իրականացնելու տուժածների առաջին բուժօգնություն (ստամոքսի լվացում, հոգնա, այրվածքի մակերեսի և խորության որոշում և այլն):<br>4. Կազմակերպելու և ցուցաբերելու առաջին օգնություն ցրտահարված տուժածներին:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)***<br>1. Անհրաժեշտության դեպքում կիրառելու առաջին բուժօգնության հնարները հասարակական վայրերում: | | |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**<br>**Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, | | |

**Ա7.**մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:
**Բ1.**պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,
**Գ4.**գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները,
**Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները: **Թեմա 2.** Վերակենդանացման միջոցառումներ: **Թեմա 3.** Թունավորումներ: **Թեմա 4.** Վնասվածքներ: **Թեմա 5.** Ջերմային խանգարումներ: **Թեմա 6.** Արյունահոսություններ: **Թեմա 7.** Վիրակապություններ: Վիրակապություններ: **Թեմա 8.** Առողջ ապրելակերպի կանոնները: **Թեմա 9.** Ինֆեկցիոն հիվանդություններ: **Թեմա 10.** Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Рожинский М. М, Катовский Г. Б. Оказание доврачебной помощи, Медицина, Москва, 1981.


| | | |
|---|---|---|
| **1.0303/B59** | **2.Երեխայի իրավունքները և երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտներ** | **3.2 կրեդիտ** |
| **4.2ժամ/շաբ.** | **5.9/9/0** | |
| **6.7-րդ կիսամյակ** | **7.Առանց ընթացիկ գնահատման** | |

**8.Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել ՀՀ-ում անչափահաս երեխայի իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն, նրանց պաշտպանությունը հասարակությունում և պետության մեջ, անչափահասի դերը հասարակությունում և նրա իրավունքներն ու պարտականությունները:

**Դասընթացի խնդիրները.**

1. բնորոշել ՀՀ երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործող օրենսդրական հիմնական նորմատիվ իրավական ակտերը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Դասակարգելու Մարդու և քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
